

ՀԱՅ-ԱԼԵԻԻԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԿՐՕՆԱԿԱՆ ՍԻՆԹԵԶԸ ԴԵՐՍԻՄԻ ԱԼԵԻԻՆԵՐԻ ԱԻԱՆ ԴԱԶՐՈՅՑՆԵՐՈՒՄ

Հրանոյշ Խառատեան

Ժամանակակից Թուրքիայի արեւելքում կենտրոնական մասում է գտնուում 1936 թ. Թունջելի կոչուող նահանգը, որն զգալի չափով համընկնում է Օսմանեան կայսրութեան Ժ. Դ. վարչական Դերսիմի նահանգի տարածքին: Այսօրուայ Թունջելիում չկան վարչական Դերսիմի որոշ տարածքներ, որոնք ներկայումս Ավազի, Երզնկայի (Էրզինջան), Էլազիգի, Բալուսի տարածքներում են: Դերսիմն աշխարհագրորէն Եփրատ եւ Արածանի (Թուրքերէն՝ Մուրադ) գետերի միջեւ մի մեծ թերակղզի է, որն սկզբունքօրէն համապատասխանում է պատմական Հայաստանի Բարձր Հայք նահանգի (Կարնոյ աշխարհ) հարաւային եւ Մոփք նահանգի (Չորրորդ Հայք) հիւսիսային տարածքների մի մասին՝ արեւելքից սահմանակից լինելով Էրզրումին եւ Մուշին, արեւմուտքից՝ Արեւմտեան Եփրատին (Կարա Սու), հիւսիսից՝ Երզնկային եւ Կամախին (Քեմախ), հարաւից՝ Խարբերդին եւ Արածանի (Մուրադ) գետին: Դերսիմի տարածքի քաղաքապետակ, դերսիմցի Գ. Հալալեանն այդ տարածքը դիպուկ անուանել է «ինքնամփոփ Դերսիմ»¹:

Դերսիմը խիստ լեռնային, հիմնականում անտառապատ տարածք է, հարուստ է կիրճերով, սարահարթերով, հովիտներով, ջրառատ գետերով: Զրերի մեծ մասի ակունքները Մնձուրի եւ Բիւրակն (Բինգեօլ) լեռներից են, որը դարձել է Դերսիմի բնակ-

չութեան առասպելները սնող տարածք:

Սովորաբար դրում են, որ մինչեւ Ժ. Դ. կէսերը Դերսիմը եղել է կիսանկախ: Իրականում Ժ. Դ. կէսերից փաստացի կիսանկախ են եղել Դերսիմի ցածրավայրերը, իսկ լեռնային՝ Խուլի կիրճի եւ Դերսիմում Տուժիկ Պապա (Սուրբ Տուժիկ, Դերսիմի Տուժիկ, Դուժիկ. սարը սրբացուած էր սեղի բնակչութեան կողմից) կոչուող տարածքը լիովին անկախ է եղել մինչեւ 1938 թ.: Բնական անմատչելիութիւնը հնարաւորութիւն է տուել այդ տարածքի բնակչութեանը որեւէ յարաբերութիւն չունենալ երկրի կառավարութեան եւ իշխանութիւնների հետ: Նրանք պետութեանը հարկ չեն վճարել, օսմանեան բանակին չեն տուել, դատարաններ չկային եւ ներքին կառավարման բոլոր հարցերը լուծուած էին տասնեակ ցեղերի (աշիրեթ) պետերի կողմից՝ կրօնական առաջնորդների հետ միասին (սէյիդ, դէդէ, քէշիշ): «Արտաքին աշխարհի» հետ վարչական կապի իմաստով ողջ Դերսիմում, թերեւս, կարելի է յիշատակել միայն Հայկական որոշ եկեղեցիները մինչեւ 1915 թ. ցեղասպանութիւնը, որոնք ենթարկուած էին Պոլսոյ պատրիարքարանին, տուրք էին վճարում, իսկ քահանաների եւ վանահայրերի ձեռնադրութիւնն ու պաշտօնները հաստատուած էին հիմնականում Երզնկայում: Սակայն, թերեւս Դերսիմի անկախութեան հետեւանքով, Հայկական գործող որոշ եկեղեցիներ նոյնպէս փաստացի անկախ էին նոյնիսկ Հայկական Հոգեւոր կենտրոններից, եւ այդ տարածքներն աւելի շատ տնօրինուած էին առանձին Հայ ընտանիքների կողմից, նոյնիսկ Հոգեւորականներ չունէին եւ դարձել էին միայն

1 Գ. Գետրոգ Հալալեան, Դերսիմի հայերի ազգագրութիւնը, հրատարակութեան պատրաստելու խմբագրել է Դ. Վարդումեանը, Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հտ. 5, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչութիւն, 1975, էջ 14 (այսուհետեւ՝ Հալալեան):

ուխտավայրեր՝ առանց Հոգեւոր-կրօնական ծառայութիւնների: Ժ. Դ. կէսերին թուրքական կառավարութիւնը միայն տեւական պատերազմներով կարողացաւ ցածրավայրային գօտում հաստատել կառավարութեան վարչական մարմիններ, ում հետ բնակչութեան յարաբերութիւնները տեւական ժամանակ կիսաթշնամական էին:

Իրականում Դերսիմն աւելի աշխարհագրական-մշակութային տարածք էր, քան վարչական միաւոր: Դերսիմ պատմա-աշխարհագրական եւ մշակութային տարածքը, որը կարող ենք պայմանականօրէն անուանել «Մեծ Դերսիմ», կարող ենք պատկերացնել՝ Դերսիմի յայտնի սահմաններին աւելացնելով Եփրատի ձախափնեայ Դերջանի, Երզնկայի, Կամախի եւ Ակնայ շրջանների այն բնակավայրերը, որոնք «գտնուելով Դերսիմի լեռների ստորոտում եւ թէեւ նուաճուած, բայց դարձեալ աշխարհագրորէն եւ ազգագրորէն պատկանում էին Դերսիմին... եւ կրօնական ու քաղաքական առումներով ենթակայ Դերսիմի օջախների ու աշիրեթների ազդեցութեանը»², ինչպէս նաեւ Բալուս: «Մեծ Դերսիմը» ներառում է պատմական Մեծ Հայքի Բարձր Հայքի Աղիւն, Դարանաղի, Եկեղեց, Մուզուր (Մնձուր), Դերջան, Մանաղի գաւառները, Մոփքից Ծահուենաց Մոփքը, Պաղնատունը, Խորձեանը, Բալահոփիտը, հաւանաբար նաեւ՝ Փոքր Հայքի Երկրորդ Հայք տարածքը: Յիշեալ անունները, բնականաբար, օգտագործուած են «Աշխարհացոյցի» անուանացանկով: 1878 թ. սուլթանի հրամանագրով Խարբերդի նահանգում որպէս գաւառ ներառուած Դերսիմի տարածքը բաժանուել է եօթ գաւառակներին՝ Չարսանջակ³, Մեծկերտ⁴, Բըզըլ-

քիլիս⁵, Չմշկածագ⁶, Փախ⁷, Օվաջըզ⁸, Խուշիշան⁹: 1914 թ., առաջին աշխարհա-

ւառի մէջ: Քաաներորդ դարասկզբին ունէր վաթսուն հայաբնակ գիւղ: Ըստ Հ. Ղ. Ինճիճեանի՝ անուը ծագում է Չեհար սանճագ՝ չորս գաւառ բառերից՝ չորս գաւառներ ունենալու պատճառով, որանք էին Մեծկերտ (Մազգիրտ), Սաղման, Փերի կամ Բերի, Բերդակ (Հ. Ղուկաս Վրդ. Ինճիճեան, Աշխարհագրութիւն Չորից մասանց աշխարհի, Վեներիկ, 1806, էջ 226): Ընկնում է պատմական Մոփսց աշխարհի Շահուենաց Մոփք եւ Պաղնատուն գաւառների յարակից տարածքների մէջ: Ներկայիս Դերսիմում վարչական Թունջելիում, ներկայացուած է գլխաւորապէս Չեմիգեզեկ (Չմշկածագ) եւ Փերթեկ (Բերդակ) գաւառներով:

4 Մեծկերտ (թուրքերէն հնչիւնափոխութեամբ՝ Մազգիրտ, օգտագործուել է նաեւ Գարաչոր, Կարաչոր անունը) - վարչական միաւոր՝ գաւառ Թուրքիայի Հանրապետութեան Թունջելի նահանգի հարաւարեւելեան մասում: Ժ. Դ. երկրորդ կէսից ստնում էր Խարբերդի նահանգի Դերսիմի գաւառի մէջ՝ որպէս Մազկերտի գաւառակ: Օսմանեան կայսրութեան շրջանում Չարսանջակի գաւառակի կազմում Խարբերդի նահանգի մէջ էր: Համապատասխանում է պատմական Մոփքի՝ Չորրորդ Հայքի Պաղնատուն գաւառին: Հարակից սահմանակցում է Մոփքի Բալահոփիտ (ներկայիս Բալու) գաւառին:

5 Բըզըլքիլիս (Բըզըլքիլիս, Կըզըլքիլիս, այժմ՝ Նազիմիլի) - քաղաք եւ վարչական կենտրոն Թուրքիայի Հանրապետութեան Թունջելի նահանգում: Ժ. Դ. երկրորդ կէսից որպէս գաւառակ մտնում էր Խարբերդի նահանգի Դերսիմի գաւառի մէջ՝ Կըզըլքիլիս անունով: Ընկած է Մոփքի Պաղնատուն հիւսիսում, թերեւս մի փոքր մաս նաեւ՝ Խորձեան գաւառի մէջ: Արեւելքից սահմանակցում է Մոփքի Խորձեան գաւառի Կոդրերդ (Կեդի, Բըզի) հատուածին:

6 Չմշկածագ (թուրքերէն հնչիւնափոխութեամբ՝ Չիմիշկեզիկ) - քաղաք եւ վարչական կենտրոն Թուրքիայի Հանրապետութեան Թունջելի նահանգում՝ հարաւարեւմտեան մասում, աշխարհագրորէն ընկնում է Խարբերդի, Չարսանջակի եւ Ակնայ տարածքում: Ի. Դ. սկզբին Չմշկածագ գիւղաքաղաքը, որպէս Չմշկածագ գաւառակի գայմագամահիստ, Դերսիմի գաւառի կազմում Խարբերդի նահանգի մէջ էր: Մասամբ համապատասխանում է պատմական Մոփսց նահանգի Փոքր կամ Շահուենաց Մոփք գաւառին: Միջնադարում հաւանաբար մասամբ ներառել է նաեւ Պաղնաց գաւառի արեւմտեան հատուածը: Չմշկածագ բերդանունը յայտնի էր Հերապոլիս (Սուրբ քաղաք) անունով: Չմշկածագում է ծնուել հայազգի բիւզանդական կայսր Թովմանէս I

2 Հալալեան, էջ 31:

3 Չարսանջակ (Չարսանճագ) - վարչական միաւոր Օսմանեան կայսրութեան Դերսիմի նահանգի, ապա՝ գաւառի հարաւային դաշտային շրջանի արեւմտեան մասում: Ժ. Դ. երկրորդ կէսից մտնում էր Խարբերդի նահանգի Դերսիմի գա-

2մշկիկը: Մ. Ուրհայեցիմ հաղորդում է, որ 2մշկիկը խոզան գաւառից էր, այն վայրից, որն այժմ 2մշկածագ է կոչում (Մատթէոս. Ուրհայեցի, Ժամանակագրութիւն, Երեւան, 1973, էջ 12): Ի. - դարասկզբին 2մշկածագ գիւղ կար խոզաթի շրջանում (Հայաջեան, էջ 34):

- 7 Փախ - գիւղաքաղաք Օսմանեան կայսրութեան խարքերոյի նահանգի Դերսիմի գաւառի Մեծկերտ գաւառակում: ԺԹ. դ. կարճ ժամանակով եղել է գայմազամահիստ: Պատմական Ծոփքի՝ Չորրորդ Հայքի Պաղնատուն գաւառի մաս էր:
- 8 Օվաջըզ (Օվաճկ, Օվաճիկ, Օվաճուխ, Հովտիկ, Բլուր) - գիւղաքաղաք եւ վարչական կենտրոն Թուրքիայի Հանրապետութեան Թունջելի նահանգում՝ հիւսիսարեւմտեան մասում: Օսմանեան կայսրութիւնում՝ խարքերոյի նահանգի Դերսիմի գաւառի գաւառակ, գայմազամահիստ կենտրոնը՝ Օվաճըզ գիւղաքաղաքը: Գտնուում է Մճնուր լեռան ակունքներից սնուող Մճնուր գետի ափին՝ Դերսիմի հիւսիսում: Ընկնում է Բարձր Հայքի Մճնուրի գաւառի արեւմտեան եւ Դարանաղեաց եւ Աղիւն գաւառների՝ Մճնուրին սահմանակցող գոտում: Օվաճիկում է գտնուում Դերսիմի ամենաբարձր, ամենակարեւոր եւ սրբազան Տուժիկ լեռը՝ Տուժիկ Պապան, որին հայերը Առիւծ էին կոչել: Դարանաղեի ճգնաւորների մասին խօսելիս Փ. Բուզանը յիշատակում է Առիւծ անունով լեռ. «Երկու անապատական ճգնաւորներ կային, որոնք նստում էին լեռներում, մէկի անունը Ծաղիտա էր, որ ազգով ասորի էր եւ նստում էր Առիւծ լեռան վրայ» (Փատտոս Բուզանը, Պատմութիւն հայոց, Երեւան, 1968, էջ 259 (այսուհետեւ՝ Փ. Բուզանը)): Գուցէ լեռն այս անունը ժառանգել է Բարձր Հայքի Աղիւն/Առիւծ գաւառի անունից (կամ, ընդհակառակը, գաւառն է ժառանգել առիւծ յիշեցնող լեռան անունը): Նոյն կերպ Դարանաղի անունը կարող է նշանակել «առիւծի դարան»՝ Դարան աղի=աղիւն, չնայած -աղի-ն նաեւ տեղանունական վերջածանց է համարում (H. Adoni, Armenia в эпоху Юстиниана, изд. второе, Ереван, 1971, с. 54-55): Յամեանյն դէպս, այդպէս է առաջարկում հասկանալ Ս. Պետրոսեանը իր «Սամուխայի մայր դիցուհու պաշտամունքի ակունքները» յօդուածում (http://hnpj.asj-oa.am/3535/1/2004-1(160).pdf, էջ 171-172): «Դարան» բառը հայերէնում իրանական փոխառութիւն է համարում Հր. Աճառեանը՝ պիլ. daran ձեւից, «ձոր, կիրճ» իմաստներով, կամ հնարար է համարում նոյնացնել սանսկրիտերէն daran-ի «փապար, խոռոչ, ծերպ» իմաստին: Վրացերէն «դարանը» նոյն իմաստն ունէր՝ «քարայր, ճեղք՝ ժայռի կամ հողի մէջ» (Հր. Աճառեան, Հայերէն արմատական բանարան, հտ. Ա, Երեւան, 1971, էջ 633): Ժայռերի անձաններում թաքստոցի իմաստով խիստ լեռնային Դարանաղին՝ ետնագոյն Օվաճիկը եւ

մարտի սկզբում, Դերսիմը բաժանուած էր ութ գայմազամուծիւնների, որոնց կենտրոնը խոզաթն¹⁰ էր: Միւս գայմազամանխատ կենտրոն ունեցող շրջաններն էին Օվաճիկը, Ակնը¹¹, Բոլոմերին¹², Ղըզըլքիլիսէն, Բալուն¹³, Մեծկերտը եւ Չարսանջակը:

Կամախը, բոլոր դարերում իսկապէս կատարել է այդպիսի գործառոյթ:

- 9 Խուշիշան (Խուզիզան, Խուզիշան, Խուզուշան, Գուզուշան, Գուզիշան, Բուզուշան) - գիւղ Թուրքիայի Հանրապետութեան Թունջելի նահանգի Բոլոմերի (Փիլիմուր) գաւառում, Ալթուն Յուսէին, Կըզըլ Մեջիդ եւ այլ գիւղերի կենտրոնն է): Կարճ ժամանակով՝ համանուն գաւառակի անունը:
- 10 Խոզաթ (Խոզադ, Խոզատ, Գիւզաթ, Գոզաթ, Դուզատ) - քաղաք եւ վարչական կենտրոն Թուրքիայի Հանրապետութեան Թունջելի նահանգում, ԺԹ. դ. գաւառակ Դերսիմի գաւառի կազմում, խարքերոյի նահանգում: Գտնուում է Դերսիմի կենտրոնում: Որոշ հետազոտողների կողմից նոյնացում է աղբիւրներում յիշատակուած Խոզան (Խուզանի, Խոզանի, Խուզանոն) բնակավայրի հետ եւ տեղադրում Ծոփքի Պաղնատուն գաւառում: Այժմեան Խոզաթն ընկնում է Բարձր Հայքի Մճնուր եւ Դարանաղեաց գաւառների հարաւային եւ Ծոփաց նահանգի Փոքր կամ Ծահունեաց Ծոփք գաւառի հիւսիսային հատուածում: Հայ պատմագիր Ստ. Տարսեցի Աստղիկը թուարկում է բիւզանդական Թիոփիլիոս կայսեր 837 թ. գրուած բնակավայրերի շարքում որպէս գիւղաքաղաք: Խոզանը երբեմն նոյնացում է ուրարտական Խուզանա անուն հետ:
- 11 Ակն (թուրք. Էզին, ապա՝ Բեմալիէ) - քաղաք եւ շրջան ներկայիս Թուրքիայի Հանրապետութեան Երզնկայի նահանգում: Մաս է կազմել Փոքր Հայքի Երկրորդ Հայք (Յուստինիանոսի վերաբաժանումից յետոյ՝ Առաջին Հայք) պրովինցիայի:
- 12 Բոլմոր (թուրքերէն հնչիւնափոխութեամբ՝ Փիլումուր) - քաղաք եւ վարչական կենտրոն Թուրքիայի Հանրապետութեան Թունջելի նահանգում՝ Պախր լեռից սկիզբ առնող Բոլմոր գետի մօտ: Օսմանեան կայսրութեան շրջանում խարքերոյի նահանգում էր՝ Դերսիմի գաւառում: Պատմականօրէն համապատասխանում է Բարձր Հայք նահանգի Մճնուրի եւ Եկեղեաց գաւառների արեւելեան, գուցէ նաեւ Դերջանի հարաւային սահմանակցող մասին:
- 13 Բալու, Բալահովիտ (թուրքերէն հնչիւնափոխութեամբ՝ Փալու) - գաւառակ Եփրատի ափին: Օսմանեան կայսրութեան շրջանում նախ խարքերոյ կուսակալութեան գաւառակ էր, ապա միա-

Ներկայում Դերսիմի զգալի մասին Համապատասխանող Թունջելի նահանգի կազմի մէջ մտնում են Չեմիշկեզեկ (Չմշկածագ), Հոզաթ (Խոզաթ), Մազգիլտ (Մեծկերտ), Նազըմիյէ (նախկինում՝ Բըզըլքիլիսէ (Կարմիր եկեղեցի)), Օվաջըզ, Բերդակ¹⁴, Փիլիմուր (Բոլոմեր), Թունջելի գաւառները:

Ի. դարի սկզբին Դերսիմ աշխարհազրական տարածքում ապրում էին զխաւորապէս զազախօս¹⁵ եւ քրմանջախօս¹⁶ ալեւիներ¹⁷, զազախօս եւ քրմանջախօս սուն-

ցուէ Դիարբեքի կուսակալութեանը: Սահմանակից էր Ծապաղջրին, խարքերոյին, Չարսանջակին եւ վարչական Դերսիմին: 1914 թ. Դերսիմի գայմազամութիւններից մէկն էր: Համապատասխանում է պատմական Ծոփքի Բալահովիտ գաւառին:

- 14 Բերդակ (թուրքերէն հնչիւնափոխութեամբ՝ Փերթակ) - քաղաք եւ վարչական կենտրոն Թուրքիայի Հանրապետութեան Թունջելի նահանգում՝ հարաւային մասում: Ընկնում է Չորրորդ Հայքի Ծահունեաց Ծոփք գաւառի տարածքում:
- 15 Չազայերէն, զազակի լեզուն իրանական լեզուներից է: Ծատերի կողմից համարուել է քրդերէնի քրմանջի բարբառին մօտ լեզու, սակայն այսօր անելանում են լեզուաբանները, ովքեր պնդում են, որ զազակի լեզուն անելի մօտ է իրաներէն խմբի գիլեաներէն եւ մազանդերէն լեզուներին եւ առանձին լեզու է:
- 16 Քրմանջի (Kurmanci, kirmancki) - քրդերէն բարբառ, որն անելի ու անելի է դառնում քրդերի մեծ մասի հիմնական լեզուն: Քրմանջը նաեւ իրանի, Թուրքիայի եւ Սիրիայի քրդերի մեծ մասի ինքնանունն է:
- 17 Ալեւի-Ալեւիզմն իսլամական աշխարհում համարում է շիիզմի ծայրայեղ աղանդատական ուղղութիւն: Համարում է, որ ալեւիների կրօնական պատկերացումները խարսխուած են իսլամական փիլիսոփայական ընդհանրացումների մասին: Ալեւիզմը տարածում է Սիրիայի արեւմուտքում, Լիբանանի հիւսիսում եւ Թուրքիայում: Թուրքիայում ալեւիզմի հետեւորդների մէջ կան թուրքմէններ, «թուրք» ինքնութիւն ունեցողներ, արաբներ, Դերսիմի եւ յարակից տարածքների (Մուշ, խարքերոյ, Երզնկա, Մալաթիա, Էրզրում եւ այլն) զազախօս բնակչութեան մեծ մասը եւ նոյն տարածքի քրմանջախօս քրդերի մի մասը: Իրենք իրենք «ալեւի» համարող յիշեալ բոլոր խմբերը կրօնական «մեք»-ի զգացում չունեն եւ

նրինք, քրիստոնեայ հայեր, շատ փոքր չափով նաեւ սուննի թուրքեր (Հիմնականում պետական պաշտօնեաներ): «Արտաքին աշխարհը» Դերսիմի բնակչութիւնը բաժանում էր քրդերի եւ հայերի, չնայած Դերսիմի «քուրդ» անուանուող բնակչութեան բացարձակ մեծամասնութիւնը տեսանելի անցեալում եւ այսօր նոյնպէս իրենց քուրդ համարել են որոշ վերապահութեամբ, եւ այսօր էլ գերադասում են իրենց Հաւաքականութիւնն անուանել «ալեւի» կամ «կղւիներ»¹⁸ բառերով: Այնուամենայնիւ, «քուր-

իականում էլ նրանց կրօնական ալեւիզմ միմեանցից տարբերում է: Դերսիմի ալեւիների մեծ մասը, ովքեր դատողութիւններ են անում ալեւիզմի մասին, պնդում են, որ ալեւիզմը կրօն չէ, այլ՝ մարդասիրութիւն, սէր աշխարհի եւ մարդկանց նկատմամբ: Նրանք կրօնական որեւէ գիրք չունեն, սակայն կրքոտ սէր եւ պաշտամունք ունեն գրքի՝ առհասարակ, քրիստոնէական կրօնական գրքերի նկատմամբ մասնատրապէս, կրօնական կառոյցներ չունեն, սակայն խիստ զգայուն այաշտամունքային վերաբերմունք ունեն Դերսիմում այժմ մեծ մասամբ ոչնչացուած քրիստոնէական եկեղեցիների եւ վանքերի ու նոյնիսկ դրանց աներակների նկատմամբ եւ նոյնքան մերժողական վերաբերմունք՝ իսլամական ցանկացած՝ սուննիական կամ շիաական ուսմունքի եւ կրօնական կառոյցների՝ մզկիթների նկատմամբ:

- 18 Կղւաշ (թուրք. թարգմ.՝ «կարմրագլուխ») - ԺԵ. ԺԶ. դդ. այսպէս անուանում էին Ակ-կոյունլուների պետութեան՝ ներկայիս Թուրքիայի եւ Պարսկաստանի յարակից տարածքներում քոչուոր անասնապահութեամբ զբաղող թրքալեզու ռազմական ցեղերի միատրումը, ովքեր շիիզմի հետեւորդ էին եւ 12 իմամների պատուին 12 շերտ ունեցող կարմրագոյն չալմա էին կրում: 1502 թ. Սեֆեան Իսմայիլ Ա-ն Ակ-կոյունլուների պետութիւնը նուանեց եւ ինքն իրեն Պարսկաստանի շահ հռչակեց կղւաշների օգնութեամբ: Իսլամի շիա ուղղութիւնը պետական կրօն յայտարարելով՝ լեւում էր գլխատրապէս կղւաշների վրայ: ԺԶ. դ. սկսած յատկապէս՝ պարսկական տիրոջ շիաներին յաճախ անուանել են նաեւ «կղւաշ»: Նախապէս էթնոլեզուական միատրի հաւաքական անուն լինելով՝ «կղւաշ» բառն աստիճանաբար ձեռք է բերել կրօնական խմբի՝ շիիզմի հետեւորդների բնութագրի: Դրան զուգահեռ պարսկական տիրոջ մաս կազմող կուլկասում, օրինակ, «կղւաշ» էին անուանում Սեֆեան Պարսկաստանի իշխանութիւնն իրաց-

դ» էքզոտանուանումն ընդհանրացած էր եւ, եթէ հաւատանք Դերսիմին քաջատեղեակ, դերսիմցի Գեւորդ Հալաջեանի հաշուարկներին, 1914 թ. Դերսիմի 384 բնակավայրերից հայաբնակ էր 37-ը, քրդաբնակ՝ 210-ը, հայ-քուրդ խառը բնակչութեամբ՝ 137-ը, ընդամենը՝ 289.465 մարդ, որից 110.386 հայ, 179.082 քուրդ¹⁹: Հայերը կազմում էին Դերսիմի բնակչութեան մօտ 38%-ը: Դերսիմի «քրդերի» մէջ որոշ թիւ էին կազմում սուլանիները, բայց բացարձակ գերակշիռ խումբը զազախօս ալեւիներն էին, որոնց յաճախ, ինչպէս ասուեց, անուանում էին նաեւ կղբաշ (ղըզլբաշ, քըզլբաշ, Կըզլբաշ), չնայած երբեմն կղբաշ էին անուանում նաեւ քրմանջախօս ալեւիներին, իսկ զազախօս սուլանիները «կղբաշ» էին²⁰:

ճող ռազմացեղային կազմաւորումներին՝ առանց կրօնական բնութագրի: Յետագայում «կղբաշ» բառը տարբեր լոկալ տարածքներում ասացել է տարբեր ընկալումներ: Դերսիմի ալեւիների մօտ, օրինակ, յայտնի է «կղբաշ» բառի ո՛չ նախնական՝ թրքական էթնոլեզուական միատրի բնութագիր լինելու հանգամանքը, ո՛չ էլ շիիզմի հետեւորդների բնութագիր լինելու հանգամանքը: Նրանք «կղբաշ» բառի կրօնական ընկալումը չունեն եւ այն գործածում են բացառապէս իրենց հաւաքակառուցեանը էթնիկ միատրի իմաստ հաղորդելու համար: Աւելորդ է շեշտել, որ նրանք «կղբաշ» չեն անուանում ո՛չ շիաւներին, ո՛չ թուրքիայի թրքախօս, արաբախօս ալեւիներին: Դերսիմում «կղբաշ» են անուանում Դերսիմի եւ յարակից տարածքի զազախօս եւ քրմանջախօս ալեւիներին:

¹⁹ Հալաջեան, էջ 100:

²⁰ Յատուկ քննարկման խնդիր է ալեւի-սուլանի, այդ թուով՝ քուրդ սուլանիների յարաբերութիւնների խնդիրը, որոնք յաճախ թշնամական էին (Hans-Lukas Kieser, *Some Remarks on Alevi Responses to the Missionaries in Eastern Anatolia (19th-20th cc.)*, Basel, Switzerland, <http://www.hist.net/kieser/pul-responses.html>; *Kurds, Turks and the Alevi revival in Turkey* by Prof. Martin van Bruinessen (http://www.let.ruu.nl/oriental_studies/mvbalevi.html), <http://www.uga.edu/islam/alevivanb.html>); Paul White, *Ethnic Differentiation among the Kurds: Kurmanco, Kizil bash and Zaza*, http://members.tripod.com/~zaza_kirmanco/research/paul.htm)

Իսկ թուրք-սուլանիների նկատմամբ Դերսիմի ալեւիների վերաբերմունքի մօտաւոր պատկերա-

հասկանալով «քուրդ» բառի պայմանակա-նութիւնը, Ժ.Թ. Գ. երկրորդ կէսից յայտնի հայ հեղինակները «քուրդ» բառի կողքին յաճախ օգտագործում էին «ղըզլբաշ» բառը («ղըզլբաշ քրդեր»), իսկ երբեմն էլ՝ առանց «քուրդ» բառի Դերսիմի տարածքի գերակշիռ հաւաքակառուցեանը յաճախ անուանում էին «ալեւի», «ղըզլբաշ» կամ, որ ամէնից յաճախ է հանդիպում, պարզապէս «դերսիմցի» բառերով:

Չնայած հայերի համեմատաբար սակաւութեանը, Ժ.Թ.-ի. Գ. Գ. Դերսիմի ողջ տարածքն ուղղակի հեղեղուած էր հայկական նախաքրիստոնէական եւ վաղ քրիստոնէական, մասամբ նաեւ՝ միջնադարի շրջանի սրբազան տարածքներով ու աւանդադրոյցներով, որոնց զգալի մասը շարունակում է պատմուել նաեւ այսօրուայ դերսիմցիների կողմից: Յատկապէս շատ են ըստ աւանդութեան այս տարածքում թաղուած Գրիգոր Լուսաւորչի եւ Տրդատ Թագաւորի գործերի մասին պատմութիւնները: 2011 թ. իմ կողմից Դերսիմում դրանցուած աւանդադրոյցի համաձայն՝ այստեղ՝ Դերսիմում է տեղի ունեցել նաեւ Լուսաւորչի՝ վիրապում յայտնուելու, Տրդատի խողակերպուելու պատմութիւնը: Ուշագրաւ է, որ ըստ հայկական գրաւոր աւանդութիւնի՝ Ագանթանդեղոսի աւանդած

ցումը տալիս է 1930-ական թթ. սկզբներին Դերսիմի վերաբերեալ թուրքիայի կառավարութեան համար ժամդարմերիայի պատրաստած զեկույցը. «Ալեւիականութեան ամենավատ եւ բացատրութեան կարիք ունեցող ճակատը թրքութեան եւ իր միջեւ առկա անդունդն է: Այս անդունդը ղզլբաշ հաւատքն է: Ղզլբաշը չի սիրում սուլանի մուսուլմանին, ատելութիւն է տածում, սուլանի իսլամի յախտեցական թշնամին է: Սուլանիներին յիշատակում են որպէս ռումի (հոռմէացի) - Ն. Ս.): Ղզլբաշները հաւատում են, որ կրում են աստուածային ուժը, իմամները մահացել են սուլանիների կոտորածներից: Դրա համար սուլանիներին թշնամի են համարում: Սա այնքան է առջ գնացել, որ ղզլբաշը թուրք եւ սուլանի, քուրդ եւ ղզլբաշ բառերը նոյնացնում է» (տե՛ս <http://www.taraf.com.tr/ayse-hur/makale-dersim-alevistan-zazaistan.htm>):

պատմութեան, հէնց այստեղ՝ Բարձր Հայքի եկեղեցաց Գաւառում է տեղի ունեցել Տրդատ Թագաւորի եւ Հայաստանում նոր կրօնի պաշտօնական աւետարներ Գրիգոր Լուսաւորչի յայտնի բանավէճը հայոց կրօնի եւ քրիստոնէութեան շուրջ, այստեղ է, որ Գրիգորը Տրդատին բացատրել է քրիստոնէութեան էութիւնը, այստեղ է Տրդատն առաջին 11 չարչարանքներին ենթարկել Լուսաւորչին²¹: Ընդհուպ մինչեւ այսօր դրանց արձագանքները պահպանուել են մեզ հետաքրքրող Դերսիմի տարածքի ներկայիս բնակչութեան մէջ:

2011 թ. ամռանն իմ դաշտային նիւթահաւաքչական աշխատանքների ժամանակ Դերսիմի ալեւի դէպքերը պատմում էին հայ Գերգիսի (Գրիգոր Լուսաւորչի - Ն. Ս.) եւ հայ Թագաւորի (Տրդատի - Ն. Ս.) բազմաթիւ հրաշագործութիւնների մասին: Մէջբերենք Օվաճիկում ապրող Ալեքսանդր դէդէի պատմութեան միայն մի՝ Տրդատի դարձի հատուածը: «Դուք, հայերդ, քրիստոնեայ էք, եւ այդ պատճառով հիմա ես տոնեայ էք, եւ այդ պատճառով հիմա ես ձեզ կը պատմեմ Գերգիսի պատմութիւնը. այսպէս սկսեց իր «մասալաների» անվերջանալի շղթան օվաճիկից Ալեքսանդր դէդէն 2011 թ. օգոստոսի սկզբի մեր հանդիպման ժամանակ: - Գերգիսի անունը սկզբում Կերգիս էր, աւելի ուշ դարձաւ Գերգիս Ալի Իսրամ (Ալի էս Սալամ՝ Մեծաբարոյ): Այս տարածքում նա Քրիստոսի ուժի հաւատով առաջին մարդն էր: Եւ քանի որ ինքը Յիսուսին էր հաւատում, նրան նախ գցել էին զննանի մէջ, որից յետոյ էլ տարել գցել էին մի խոր փոսի մէջ: Որոշ ժամանակ անց այդ փոսի մէջ մի փոքրիկ կտոր հաց է ընկնում: Ուրեմն մի հատ կլին զննում է պահապանին փող է տալիս ու էդ մարդու համար հաց է գցում ներքեւ: Որոշ ժամանակ յետոյ այդ կլինը երեք օր էլ գալիս: Չորրորդ օրը, երբ գալիս է, այդ մարդն ասում է. «Ինչո՞ւ ու-

շացար, ինչո՞ւ էէր գալիս»: Այդ կլինն էլ ասում է. «Որովհետեւ քո նման հաւատացեալ երեք աղջիկների պատճել են²², դրա համար ես այնտեղ սուգ էի պահում, դրա համար էէի եկել»: Նա էլ ասում է. «Ես վստահ եմ, որ Թագաւորը միառժամանակ յետոյ խողի կերպարանք է ստանալու»: Թագաւորն իսկապէս շուտով խողի կերպարանք է ստանում: Ինչքան հեքիմ են կանչում, բժիշկ են կանչում, ոչ ոք դրան չի կարողանում օգնել: Ուրեմն այդպէս մի երեք-չորս տարի անցնում է, դրա վէճերը երազ է տեսնում, որ էդ Թագաւորի փրկութիւնը էդ ջրհորի, էդ փոսի մէջն է: Այնտեղից է գալու փրկութիւնը: Լուր են տանում, զննում են էդ Գերգիսին հանում են վերեւ: Նա էլ ասում է, որ կը գնաս, էրզինջանի

²² «Բո մման հաւատացեալ երեք աղջիկների պատճել են» արտայայտութիւնը, անկասկած, առնչում է Հոռմէական լիպարութիւնից Հայաստան փախած քրիստոնեայ կոյսերի մասին հայկական աւանդադրոյցին: Դերսիմի տարածքում իսկապէս կան երեք քրիստոնեայ կոյսերի յիշատակները: Նախ՝ Դերսիմի Սեպուր (կամ՝ Գոհաւամ) լեռան գագաթներից մէկի ապառաժների մէջ, Գ. Հալաջեանի տեղեկութեամբ, «երկու ուխտագնացութեան այր կար, մէկը Հոնփսիմէի, միւրը Մարիամի անունով, որոնք այդ երկու կոյսի ճգնարաններն են եղել» (Հալաջեան, էջ 28): Իսկ նոյն Սեպուր (կամ՝ Գոհաւամ) լեռան արեւելեան բարձունքներից մէկի ստորոտում՝ Օռլա գիւղից քիչ վեր, Օռլայի Ս. Օռլակաթ (Աստուածածնի) վանքն էր (Հալաջեան, էջ 26): Դարանաղի գաւառի Մանեայ այրը լեռան ճգնարանում է իր կեանքի վերջին տարիներն անցկացրել նաեւ Լուսաւորչի, ինչի առթիւ Մ. Սորեմազնի հարկ է համարել որոշ բացատրութիւն տալ. «Բայց ասեմք, թէ ինչո՞ւ էր կոչում Մանեայ այրը: Որովհետեւ Հոնփսիմէաց ընկերների մէջ կար մի կին, Մանի անունով...որ չկարողացաւ հասնել եւ հետեւել իր ընկերներին, երբ գալիս էին մեզ մօտ, եւ գիտնալով, որ բոլոր տեղերն էլ աստծուն են, բնակուեց այս լեռներում, քարայրների մէջ, որի պատճառով լեռան անունը կոչուեց Մանեայ այրը» (Մովսէս Սորեմազնի, Հայոց պատմութիւն, Երեւան, 1990, էջ 136-137 (այսուհետեւ՝ Սորեմազնի): Սեպուր լեռը Երզնկայի արեւմտեան կողմն է՝ մօտ 20 կմ հեռավորութեամբ, ներկայիս Դերսիմի Օվաճիկի շրջանում:


²¹ Ագաթանգեղոս, Պատմութիւն հայոց, Երեւան, 1977, էջ 45-62 (այսուհետեւ՝ Ագաթանգեղոս):

(Երզնկա - Հ. Խ.) Գառնի գիւղում²³ մի հատ եկեղեցի կը սարքես, էդ եկեղեցում 21 հոգի պէտք է աղօթք կատարեն: Ասում է սարբերից իջեցրած քարերով պիտի սարքուի էդ եկեղեցին: Բայց քարը չպէտք է գլորուի, չպէտք է գետին դիպչի: Ուրեմն ո՞նց պիտի սարքուի. շարք են կանգնում, քարը ձեռքից ձեռք է անցնում, որ ոչ թէ վերելից գցեն գետնին, այլ մարդիկ ձեռքից ձեռք փոխանցեն այնպէս, մինչեւ գնայ հասնի այդ եկեղեցին: Այդ բանը որ սարքում են, ալի էսիլամ (Ալի էս Սալամին - Հ. Խ.), այսինքն՝ այդ քարի լուրը տանում են, տալիս են իրեն, թագաւորն ուղղում է, այսինքն՝ մարդու կերպարանք է առնում: Միայն ոտքի ճկոյթի վրայ մի փոքր հետք է մնում: Դրանից յետոյ թագաւորը բարձրանում է Մնձուրի լեռները: Սարերում է ապրում: Հիմա չգիտենք՝ մարդու պէս ապրեց, թէ ոնց ապրեց, բայց մինչեւ հիմա էլ սարբերում ոմանց ծերացած մարդու կերպարանք է յայտնւում²⁴: ...Քրիստոսի եւ նրա ընկերների մատուցները մեր Դերսիմում են: Եկեղեցիների տակ են: Մքտորը հայկական մեծ գիւղ է եղել: Մի մասը նրա տակ են: Չորս տարբեր եկեղեցիների տակ են: Յետոյ կան Կրզըլքիլիսէում, Ղարաքիլիսէում: Կրզըլքիլիսէին հիմա Նազիմիէ են ասում: Ղարաքիլիսէն Սուրուերանում է՝ Թունջելից Օվաճիկի արանքում: Դրանք հայերի սրբավայրեր են: Իսկ չորրորդի տեղը չեմ ասի: Ոչ մէկի չեմ ասելու: Թէ չէ՛ մարդիկ կը գնան, կը փորեն, կը փորձեն գտնել, իսկ

23 Խօսքը գնում է Կամախի Գառնիի մասին: Ըստ Խորենացու տեղեկութեան՝ Տրդատն է շինել Կամախի Գառնի ամրոցը՝ տաշած որձաքարով, «բայց սուրբ Գրիգորը նոյն լեռները դառնալով այլեւս ոչ որի չերեւաց մինչեւ իր վախճանուելը» (Խորենացի, էջ 156):

24 Մ. Խորենացու տեղեկութեամբ՝ Տրդատը «գցում է երկրային պսակը, գնում է երկնային պսակի հետեւից, շուտով հասնելով այն տեղը, ուր Քրիստոսի ճգնաւորը (Մանգին) լեռների քարայրում էր ապրել», այսինքն՝ Դարանաղի, տուեալ դէպքում՝ Դերսիմի Սեպուր լեռը, եւ այստեղ էլ մահանում է (Խորենացի, 159):

դա չի կարելի: Այդ պատճառով չեմ ասի: Մենք որտեղի՞ց գիտենք այդ մասին: Մեզ հայերն են պատմել: Քանի որ մենք բոլորս նոյն եկեղեցին ենք գնում: Հայերն են պատմել, որ այդտեղ սուրբ մարդկանց մատուցներն են: Ինչքան Մնձուր, Խնձուր, Տանձի, Մքտոր, Խոզաթ կայ, դրանք բոլորը հայերի սրբատեղեր են: Ալեւիններն էլ հարիւրամեակներ շարունակ գնում են այդ տեղերը եւ գիտեթ են անում: Այդպիսի մի ասացուածք կայ. «Միւթունութ մայա թուլթամ», այսինքն՝ «Կաթին մայա չի բռնում»: Այդ բանը ասում ենք, մենք այդտեղ աղօթում ենք էլի որպէս սրբատեղի: Յիշում ենք, որովհետեւ աւանդոյթ է դարձել: Գնում ենք այդ տեղերն ու այդ տեղերում ենք այդ պատմութիւնները սովորում, եւ անընդհատ պատմում են այդ բաները»:



Լուսանկար 1 - Ալեքսանդր Դեդէ (Կեանքոնում, ձեռնարկատու) Օվաճիկում պատմում է Գերգիսի պատմութիւնը: Նրա աջ կողմում հայ-ալեւի Իբրահիմ Օզերն է, ձախ կողմում՝ դերսիմցի բանահաւաք Մեթին Կահրամանը, 2011 թ.:

Ներկայիս Մազգիրդի գաւառի Ալանազի գիւղում, որի անունը գեոեւս քսան տարի առաջ աւանդական Խոզըքեոյ (Խոզագիւղ - Հ. Խ.) էր, Սուրբ Յուսիկի²⁵ գե-

25 Սուրբ Յուսիկ - Գրիգոր Լուսաւորչի թոռը, նրա աւագ որդի Վրթանէսի երկուորեակներից մէկը՝ Աղուանքի լուսաւորիչ համարուող Գրիգորիսի կրտսեր եղբայրը: Հայոց Հայրապետ է դարձել 341/342 թ.: Ըստ աւանդութեան՝ մեծ տառա-

րեզմանն ու ուխտատեղին է: Գիւղի Խոզագիւղ անունը տեղացիները կապում էին Տրդատի խոզ դառնալու աւանդազրոյցի հետ²⁶: Խոզագիւղը միշտ հայկական գիւղ է եղել, իսկ այսօրուայ բնակիչները 1915 թ. յետոյ հաստատուած ալեւիացած հայեր են, բայց շարունակում են այցելել սրբավայր. «Այստեղ մի գիտեթ է եղել, այդ գիտեթում սուրբ Հիւսուքի գերեզմանը կայ, հէնց աղբիւրի մօտ: Այսօր էլ մարդիկ գնում են, մոմ են վառում, մատաղ են անում», - պատմում էր Խոզագիւղի ներկայիս բնակիչ, ալեւիացած Զիյա Բուլաթը: Նա, սակայն, չգիտի սուրբ Հիւսուքի պատմութիւնը:

Դերսիմի՝ այժմ աւերակ հարիւրաւոր եկեղեցիների զգալի մասը կրում է գլխաւորապէս Ս. Լուսաւորչի, Ս. Տիրամայր, Ս. Աստուածածին անունները: Վերջինս, ամենայն հաւանականութեամբ, ուղղակի կապ ունի պատմական Բարձր Հայքի ու Ծոփքի տարածքի հեթանոսական աստուածուհիների, մասնաւորապէս՝ Անահիտ աստուածուհու բազմաթիւ տաճարների եւ այլ սրբավայրերի՝ Մարիամ Աստուածածնի ժառանգման Հայաստանում տարածուած երեւոյթի հետ: Առանց բացառութեան

պանքեր էր կրում հայոց արքունիքի եւ ազնուականների աշխարհիկ բարքերի պատճառով ու յաճախ էր աստուծոյ արագ, ինչի պատճառով Տիրամայրը նրա հետ թշնամացել էր: Հերթական մի կշտամբանքից յետոյ թագաւորի հրամանով նրան Ծոփքի գաւառի Բնաքեղ բերդի հէնց եկեղեցու մէջ բրածեծ են անում, որից յետոյ կիսամահ հայրապետին տեղափոխում են Թորոս գիւղ՝ իր հայրական կալուածքը, որտեղ էլ մահանում է 347 թ. (Շնորհք արքեպ. Գալուստեան, Հայագի սուրբեր, Երեւան, 1997, էջ 51-53):

26 Սրանք հաւատում էին Գրիգոր Լուսաւորչին չարչարելու հետեւանքով Տրդատ թագաւորի կերպարանափոխման ատապելին եւ ասում, թէ գիւղի անունը ոչ թէ Խոզընգեղ է, այլ՝ Խոզնուղ: Իբր թէ Տրդատը խոզի կերպարանափոխուելուց յետոյ ապրել է դիմացի Խաչկետուկի քարայրում, որի ստորոտում գտնւում էին [եկեղեցու փլատակներ]» (Հալաքեան, էջ 73):

հայկական բոլոր սրբավայրերը՝ նախաքրիստոնէական, քրիստոնէական, ժողովրդական-քրիստոնէական, միաժամանակ սրբազան էին եւ են նաեւ տարածքի ալեւի բնակչութեան համար: Բուն ալեւիներն իրենք կրօնական կառոյցներ չունէին:



Լուսանկար 2 - Ս. Յուսիկի գերեզմանը Խոզագիւղում (այժմ՝ Ալանազի), 2011 թ.

Դերսիմի էթնոկրօնական բազմազանութիւնը, տարբեր խմբերի ինքնութիւնների տարամոլութիւնը հետազօտուած է գլխաւորապէս վերջին հարիւրամեակի յայտնի նիւթերով, մինչդեռ դրանք զգալիորէն ազդուած են ողջ անցեալի պատմամշակութային իրողութիւններից, ուստի սոյն յօդուածի առջեւ դրուած խնդրի շրջանակներում իմաստ ունի որոշ անդրադարձ կատարել անցեալի յայտնի խնդիրներից մի քանիսին:

Համառօտ պատմական տեղեկութիւն

Մեծ Հայքի ծայրագաւառների էթնոկրօնական խնդիրներին չանդրադառնալով՝ մասնաւոր յիշենք միայն, որ Ք. ա. Ա. դարի հէնց սկզբին Տրդատն Մեծը Հայաստանին միացրեց Ծոփքը, Եկեղեցի եւ Դարանազեաց գաւառները՝ դարձնելով դրանք Մեծ Հայքի ծայրամասային, բայց խիստ կարեւոր տարածքներ: Մեծ Հայքի տարածքում ոչ մի այլ վայր չի ունեցել այնպիսի ազգային բազմազանութիւն, ինչպիսին Ծոփքը: Այստեղ ապրում էին հայեր, ասորիներ, յոյ-

ներ եւ այլ, ոչ միշտ հասկանալի ինքնու-
թիւններով տարբերակուող խմբեր: Այդպի-
սիներից էին, օրինակ, ուրտիացիները, ում
մասին տեղեկութիւն կայ Ը. դ. ասորա-յա-
կորիկ տարեգիր Կեղծ Դիոնեսիոս Թել
Մահրացու՝ Չորրորդ Հայքի Տուտիս կո-
չուած վայրում 774-775 թթ. արաբների դէմ
ապստամբութեան մասին պատմութեան
մէջ: «Այն վայրը, ուր ծագեց ապստամբու-
թիւնը, գտնուում էր լեռներում, հիւսիսային
շրջանում, որ կոչուում էր Տուտիս, որի ազ-
գաբնակչութիւնը բաղկացած էր ասորիներ-
րից եւ ուրտիացիներից, որոնք բաժանած
ունէին այդ շրջանը»²⁷: Չորրորդ Հայքի՝

27 Լ. Մելիքսեթ-Բեկ, Չորրորդ Հայքի 774-775 թթ. գիտա-գիտական ապստամբությունը. «Պատմա-բանասիրական ուսումնասիրություններ», Դ, էջ միածին, 2010, էջ 291 (այսուհետեւ՝ Մելիքսեթ-Բեկ): Ուրտիացի ժողովրդի մասին վկայություն կայ նաեւ Յաննիսիոս Ժ. դ. համար: Լ. Յ. Տաշեանը համաձայնում է Յ. Մարկուարտի եւ Լ. Հիրշմանի՝ ուրտիացիներին Ուրարտու պետու-թեան մնացորդներ համարելու կարծիքի հետ (Լ. Յ. Տաշեան, Հին Հայաստանի արեւմտեան սահ-մանը Փոքր Հայք եւ Կողոպենե (Սեբաստիա). «Հանդես ամսօրեայ», 1940, թիւ 106, էջ 4-5): Քննարկելիք հարց է նաեւ ուրտիացիների ա-նուան կապն ուրումեացիներ կամ ուրուացիներ, ապա սրանից՝ արմէ-արմէն անուան հետ: Ա. Յակոբեանը, քննարկելով մայրոց հայագետներ-ի վերլուծությունները (այդ թուում՝ Ս. Տ. Երե-մեան, Հայերի ցեղային միությունը Արմէ-Յուպ-րիա երկրում. ՊԲՀ, 1958, թիւ 3, էջ 59-74. Լ. Մ. Աւետիսեան, Հայկական լեռնաշխարհի եւ Հի-սիսային Միջագետքի պետական կազմաորում-ների քաղաքական պատմությունը մ. թ. ա. XVII-IX դդ., Երեւան, 2002, էջ 108-113), հնարատր է համարում արմէնների՝ որպէս հայերի էքզոէթ-նոնիսի, կապը Արմէ երկրանուան հետ, իսկ վեր-ջինս՝ ուրումեացիներ կամ ուրուացիներ անուան հետ (Ա. Յակոբեան, Հայ ժողովրդի էթնոհա-մայնական գործընթացի պատմամշակութային առանձնայատկությունները, - «Վէմ» համահայ-կական հանդես, Ե (ԺԱ) տարի, 2013, թիւ 1 (41), յունար-մարտ, էջ 42): Եթէ այս ենթադրությունը ճիշտ է, ապա ուրուացիների, իսկ սրանից՝ ուր-տու-ուրտիացիների դէպքում մենք գործ ունենք մայրաքաղաքի մի խմբի հետ, որը Մոսիքի մասն բազմազգ, միշտ էթնոսահմանային տարածքում պիտի մնէ, էթնոցեղային «մենք»-ի իր կայունա-ցած զգացումն ունենար, եւ արդէն Ք. յ. Ը.-Ժ. դդ., հաւանաբար նույնիսկ անելի վաղ, իր տարբե-

Մոսիքի հիւսիսը հէնց ետնագոյն Դերսիմի լեռնային տարածքն է:

Ազգային բազմազանութիւնը զու-
գակցում էր նաեւ կրօնական նախընտ-
րութիւնների բազմազանութեամբ, որն ինչ
որ չափով համահարթեցում էր հելլէնիզմի
ակտիւութեան շրջանում: Մասնաւորա-
պէս՝ Տիգրան Մեծը, հետեւելով հօր օրինա-
կին, շարունակեց Հայաստան տեղափոխել
հելլէնական աստուածների արձանները:
Խորենացին յայտնում է, որ Արտաշէսը
«Ասիայում գտնելով Արտեմիդի, Հերակլէ-
սի եւ Ապոլլոնի պղնձաձոյլ ոսկեղօծ ար-
ձանները բերել է տալիս մեր աշխարհը,
որպէսզի կանգնեցնեն Արմաւիրում... Հել-
լազայում էլ վերցնելով Դիոսի, Արտեմիսի,
Աթենասի, Հեփեստոսի եւ Ափրոդիտէի ար-
ձանները՝ ուղարկում է Հայաստան: <Բե-
րողները> դեռ մեր աշխարհը չհասած՝
լսում են Արտաշէսի մահուան բոթը եւ ար-
ձանները փախցնում հասցնում են Անի
ամրոցը, քուրմերն էլ արձանների հետ գա-
լով՝ նրանց մօտ էլ մնում են»²⁸: Սոյն Անի
ամրոցն, անշուշտ, կամախի Անին է Երզն-
կա քաղաքի մօտակայքում, Մեծ Հայքի
Բարձր Հայք աշխարհի Դարանաղի գաւա-
ռի կենտրոնը: Այս ընտրութիւնը հաւանա-
բար պատահական չէր, քանի որ Դարանա-
ղեաց գաւառում՝ Երզնկայի մօտ գտնուող
Անի ամրոցում, արդէն իսկ գտնուում էր
հայոց պանթէոնի առաջին աստուածու-
թեան՝ Արամազդի գլխաւոր մեհեանը: Ար-

րակիչ անուանով (ուրտի, ուրտիացի), լեզուով
(մայրաքաղաքէն), թէ ինքնութեամբ տարբերուէր
տեղի ասորիներից, յոյներից եւ հայերից: Աւելի
ուշ, ինչպէս Լ. Յ. Տաշեանն է ենթադրում,
նրանք պէտք է կա՛մ հայացած, կա՛մ ասորա-
ցած, կա՛մ քրդացած լինէն: Դատելով լեռնային
զարգացումներից՝ անելի հաւանականը քրդա-
նայն է թուում: Թերեւս անելորդ չէ ուշադրութիւն
դարձնել այն բանին, որ յամենայն դէպս մինչեւ
Ի. դ. սկիզբ Դերսիմում կար Էրտիմէ անուանով
գիւղ եւ Էրտիմէ քուր՝ Եփրատի վտակ (տե՛ս Հա-
լաշեան, էջ 11):

28 Խորենացի, էջ 80:

տաշէսի որդի Տիգրանն արդէն մեհեանական
նոր կառույցների վայր ընտրեց յատկապէս
Եկեղեաց, Դարանաղի գաւառները եւ Դեր-
ջանը, ուր տեղադրեց աստուածների նոր
արձաններ: Նոյն Անիում կանգնեցրեց Ու-
ղիմպիական Դիոսի արձանը, Եկեղեաց
գաւառի Թիլ աւանում՝ Աթենասինը, Երի-
գայում՝ Արտեմիդինը, Հեփեստոսինը՝ Բա-
գայաուիճում²⁹: Տիգրանն էր, որ Եկեղեաց
գաւառն ընտրեց Անահիտ աստուածուհու
պաշտամունքի կենտրոն եւ այնտեղ կանգ-
նեցրեց Անահիտի ոսկեձոյլ արձանը: Երի-
գայում էր գտնուում նաեւ Արտեմիսի մե-
հեանը³⁰: Դարանաղեաց գաւառի Թորդան
գիւղում Տիգրանը կանգնեցրեց Միջագետ-
քից տեղափոխած «սպիտակափառ Բարշա-
մինա» աստծոյ արձանը եւ կառուցեց
նրան նուիրուած մեհեան³¹: Տիգրան Մեծի
ընտրութիւնից յետոյ Եկեղեաց գաւառը
Դարանաղի գաւառի հետ Հայաստանի հա-
մար դարձել էր նշանաւոր կրօնական
կենտրոն: Եկեղեաց գաւառի Թիլ աւանում
էր Տիգրանի կողմից բերուած Աթենաս-
նանէ աստուածուհու (Չեւս-Արամազդի
գետեր) արձանը եւ տաճարը³², Դերջա-
նում՝ Բագաուիճում էր Միհրի մեհեանը³³:
Սրանք հռչակաւոր մեհեաններ էին՝ ըն-
դարձակ կալուածքներով ու սպասարկող
կառույցներով: Ազգաթանգեղոսը, նկարա-
գրելով Տրդատի եւ Գր. Լուսաւորչի համա-
տեղ արչաւանքը հեթանոսական մեհեան-
ների դէմ, Եկեղեաց գաւառի մեհեաններն
անուանում է «Հայոց թագաւորների մեծ
ու բուն մեհեաններ»³⁴: Եկեղեաց գաւառը
տեւական ժամանակ գլխաւորել է Հայոց
նախաքրիստոնէական կրօնական կենտրո-
նի առանձնաշնորհութիւնը, թերեւս մին-

չեւ քրիստոնէութեան մուտքը: Թագաւոր-
ներն այստեղ էին պատիւներ մատուցում
աստուածներին՝ նշելով իրենց յաղթանակ-
ները, այստեղ էին կազմակերպում տարե-
կան տօնացոյցի գլխաւոր տօնահանդէսնե-
րը: Աւելորդ չէ ասել, որ այս նոյն վայ-
րում՝ Դարանաղիում էին Արչակունի թա-
գաւորների դամբարանները:

Հէնց այս նոյն՝ Հայոց թագաւորների
փառաւոր մեհեանական տարածքում են
սկսուում կրօնափոխութեան առաջին զար-
գացումները: Տրդատի դարձից յետոյ Եկե-
ղեաց ու Դարանաղեաց գաւառների մեծա-
նուն մեհեանները դրանք փառաբանող
Տրդատի իսկ ձեռքով ի վերջոյ կործան-
ուում, աւերուում, արձանները ջարդուում եւ
մեհեանները սպասարկողները ցան ու ցիր
են լինում, կամ համաձայնում դառնալ
նոր կրօնի սրբատեղիների սպասաւորներ,
եւ, ինչպէս յայտնի է, նոյն մեհեանական
տարածքները դառնում են քրիստոնէական
պաշտամունքի առաջին տարածքները՝ ի
դէմս նորակառույց եկեղեցիների, վանքերի
եւ դրանց միահիւսուած նոր, քրիստոնէա-
կան աւանդադրոյցների: Բարձր Հայքը
Մոսիքի հետ միասին դառնում է կրօնական
եւ քաղաքական առեւակատումների դրա-
մատիկ իրադարձութիւնների թատերաբեմ:
Հեթանոսական փառաբանուած մեհեաննե-
րին վարժուած բնակչութիւնն ակտիւ դի-
մադրում էր նոր կրօնի մուտքին: Հէնց
այստեղ է սպանուել, ըստ աւանդութեան,
56 տարի թագաւորած եւ այդ տարիներից
քառասունը Հայաստանում քրիստոնէու-
թեան ներդրմանը նուիրած Տրդատ թագա-
ւորը, երբ իր գործունէութեան արդիւնք-
ներից դժգոհ ու յոգնած քաջուել էր ճգնե-
լու Դարանաղիում գտնուող յայտնի Մա-
նեայ այր կոչուող լեռը, բայց նրա հետե-
ւից մարդ են ուղարկում եւ «թունաւոր
ըմպելիք են տալիս...»³⁵: Մոսիքում է սպա-
նուել նաեւ Գր. Լուսաւորչի որդին՝ Հա-

35 Խորենացի, 159:

29 Խորենացի, էջ 82:

30 Նոյն տեղում, էջ 123:

31 Նոյն տեղում, էջ 83:

32 Ազգաթանգեղոս, էջ 123:

33 Նոյն տեղում, էջ 124:

34 Նոյն տեղում, էջ 123:

յաստանի հայրապետ Արիստակէսը, Չորրորդ Հայքի վերակացու նշանակուած Արքեղայոսի կողմից³⁶: Այստեղ է սպանուել եւ թաղուել Լուսաւորչի երրորդ սերնդի ժառանգը՝ Յուսիկը³⁷:

Չնայած իրադարձութիւնների դրամատիզմին, գուցէ նաեւ այդ պատճառով, լեռներով եւ այրերով հարուստ այս բազմազգ սահմանային տարածքում ապաստան էին գտնում թէ՛ թաքստոց, թէ՛ մենակեցութիւն փնտրողները, թէ՛ ճգնաւորները, թէ՛ աւազակները, թէ՛ հալածեալները: Ազատագրող ստեղծակցում է, որ Դարանաղեաց գաւառի Մանեայ այրք անունով յայտնի քարայրում ապրել է Հռոմէական կայսրութիւնում հետապնդումներից Հայաստան փախչող Հռիփսիմեանց կոյսերից Մանէն³⁸, աւելի ուշ՝ նաեւ Լուսաւորչին ինքը³⁹ եւ, ինչպէս վերը տեսանք, Տրդատ թագաւորը: Ուշագրաւ են Փ. Բուզանդի համառօտ տեղեկութիւնները նաեւ այլ ճգնաւորների՝ ասորի Շաղիտայի եւ յոյն Նպիփանի մասին: Վերջինս «նստում էր Մեծ լեռան վրայ, աստուածների տեղում, որ կոչուում էր Անահիտի աթոռ»⁴⁰: Դարանաղիում գտնուող ասորի աւազակների մասին խօսում է Խորենացին⁴¹: Բնական է, որ այն նաեւ իր անառիկութեամբ հիանալի թաքստոց էր քաղաքական հալածեալների համար, ինչի մասին ուղղակի վկայում է Խորենացին⁴²: Ե. դարում այն շա-

րունակում էր մնալ բազմազգ եւ բազմակրօն: Այդ մասին է վկայում թէկուզ եւ Հայաստանի պարսկական մասի թագաւոր Խոսրովի դէմ ապստամբած վանանդացիների դէմ պայքարի միջադէպի Խորենացունկարագրութիւնը. «Նրանցից շատերին կոտորեց եւ շատերին էլ փախցրեց Չորրորդ Հայքի կողմերը: Որովհետեւ նրանք ոչ Խաղտեաց երկիրն ընկան, յոյներին ապաւինելով, եւ ոչ էլ անցան Արշակ թագաւորի մօտ (Հայաստանի հռոմէական մասի թագաւորի - Հ. Խ.), այլ նման մի քանի աւազակների, որոնք Չորրորդ Հայքի կողմերում էին, նրանք դիմեցին ասորոց սահմաններին ապաւինելու... Սահակը նրանց քշեց մինչեւ Մանանաղիի սահմանները»⁴³:

Տեւական է եղել ոչ միայն «Հին կրօնի» կողմնակիցների դիմադրութիւնը, այլ լեւ՝ այն պահպանելու եւ սերնդէ սերունդ փոխանցելու գիտակցուած ընտրութիւնը: Յիշեալ դէպքերից 1500 տարի անց Դերսիմում դեռեւս կային մարդիկ, ովքեր համարում էին, որ իրենց նախնիները Դերսիմի տարածքի հնադոյն կռապաշտ հայերի սերունդներն են: Նրանց տոհմական-ընտանեկան յիշողութիւնը կապուած է Դերսիմի տարածքի եւ մասնաւորապէս՝ այդ տարածքում քրիստոնէութեան մուտքի ժա-

նկարագրում է, թէ ինչպէս Սեպուհ լեռան անմտչելի քարայրներից մէկում մէկ տարուց աւելի թուրքական ոստիկանութիւնից թաքնուել են Երզնկայի Բիզնէան գիւղից երեսուն զինուած հայեր, որոնք 80-մետրանոց պարսկական իջեցնում էին խմբի անդամներից որեւէ մէկին՝ պարէն ճարտար համար (Գ. Ստեփանեան, Միջնաւազայի օրեր, Երեւան, 2009, էջ 73-84, 150): Առհասարակ Դերսիմի տարածքի անառիկութիւնը, յատկապէս՝ Գրա լեռնային՝ Խոսրի կիրճը եւ Տուժիկ Պապա լեռը, աղմուսազ երեք հարիւրամեակ հնարարութիւն է տուել դերսիմցիների անկախ մնալ թուրքական իշխանութիւններից եւ մի ամբողջ հարիւրամեակ՝ ԺԹ. դ. սկզբներից միմիայն Ի. դ. սկզբները, բոլոր կոնկրետ յարթ լիճալ Օսմանեան կայսրութեան կամոնատր բանակի դէմ:

43 Խորենացի, էջ 204:

36 Խորենացի, 157:
37 Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն հայոց, Երեւան, 1968, էջ 90 (այսուհետեւ՝ Բուզանդ). Խորենացի, էջ 175:
38 Ազատագրող, 146. Խորենացի, 146-147:
39 Խորենացի, 157:
40 Բուզանդ, էջ 259:
41 Խորենացի, էջ 200-201:
42 Նոյն տեղում, էջ 204, 205: Տարածքի այս անառիկութիւնն օգտագործել են նաեւ հայերը ցեղապանութեան ժամանակ: Խորենացու յիշեալ նկարագրութեանը նման պատմութիւններ ունեն նաեւ 1915 թ. հայ փախստականները: Օրինակ՝ «Միջնաւազայի օրեր» գրքում Գ. Ստեփանեանը

մանակ տեղական պաշտամունքները պահպանելու պատճառով մեկուսացման հետ: Գ. Հալաջեանը մեզ է հասցրել Ի. դարակազմում կռապաշտութիւնը որպէս ընտրութիւն ներկայացրած մի յարգարժան ալեկի պատմութիւն, որ աւելորդ չէ մէջբերել որոշ ծաւալով: Ըստ այդ պատմութեան՝ իրենց նախնիներն ապրելիս են եղել Քարտակ գիւղում, Քարփանքների ստորոտում, հսկայական ժայռերի հովանաւորութեան տակ, երկու ձորի արանքում, ուր եղել է մի զօրաւոր սրբատեղի (զիարեթ), որն ունեցել է Մնձուր լեռան Անայի (Անահիտի - Հ. Խ.) կաթնաղբիւրներից մի զօրաւոր ակ եւ կոչուել է Անա: «Քարտակի մեր գիւղի կործանումից եւ Զիարեթի քարափոր ուխտատեղին քարերով ծածկելուց յետոյ Անայ է փրկւում ողջ մնացած իր հարազատների հետ ապաստանել է Տուժիկ Պապայի (սրբազան լեռ է Դերսիմի տարածքում - Հ. Խ.) անմատչելի ծերպերում, ապա վերադարձել եւ հիմնել առաջին մեզրէն, ուր եւ վառել է առաջին օջախը եւ իր անդրանիկ որդուն է յանձնել այդ օջախի պաշտպանութիւնը, որից եւ սերունդ է մեր տոհմը: ... Այդ զիարի (սրբավայր - Հ. Խ.) տեղը բարձրացել են քարէ բլուրներ, որովհետեւ զիար քանդողներն այդ տեղը նըհաննեթնամէ են կոչել եւ խորհուրդ տուել, որ ամէն մէկ անցնող մի քար նետի այդտեղ, ուր թաղուած է Անայի զիարը եւ դարեր շարունակ նետուած քարերից գոյացել են քարփանքներ եւ այն մեծ բլուրը... Զիարի տեղն անյայտ է, բայց կաթնաղբիւրը մնում է անվթար, ուր գնում ենք ուխտի եւ մատաղ մորթում մեր մեծ մօր յիշատակին... Մեծ Անայի օջախը վառ պահելու համար մեր պապերն այդպէս են յարմար տեսել: Դուք՝ Հայերը էլ ժամանակին կռապաշտ էք եղել, յետոյ էք ընդունել քրիստոնէութիւն, մեր նախահայրերն էլ հայեր են եղել, նոյնիսկ իմ հօրեղբոր տղաները, որ բնակուում են Քարփանքի մեզրէններում, թէեւ խօսում են ալեկիերէն,

պահում են իրենց ազգային ծագումը եւ կոչուում են միրազներ: Կաթնաղբիւրը բոլորի կողմից պաշտուում է, ոչ մէկ խտրութիւն հայի եւ քրդի միջեւ: Բոլորս միասին գնում ենք ուխտի, ինչպէս եւ ուրիշ շատերը, որ գալիս են մեր վանքը՝ հրաշագործ սուրբ Կարապետին այցելութեան»⁴⁴: Ուշագրաւ է նաեւ Գ. Հալաջեանի զրոյցը Խոզազիւղում ապրող մի պատկառելի Հայ դերսիմցու հետ: Երբ նրան հարցնում է, թէ ինչու չեն վերականգնում իրենց գիւղի դիմացի եկեղեցին, որն իբրեւ թէ Տրդատ թագաւորի ձեռքով է կառուցուել, մարդը պատասխանում է. «Ամեն հայու ժամը (եկեղեցին - Հ. Խ.) շեշխանու (հրացանի - Հ. Խ.) մէջ, Ասուածը (Աստուած - Հ. Խ.) սրտումն ա... Մեր թագաւորներից վե՞րը մեծ ա, կռապաշտ Տրդատն, թէ՞ խաչապաշտ Տրդատը... Իսուս Քրիստո՞սը զուեթ (ուժ, կարողութիւն - Հ. Խ.) կիտար Տրդատին, թէ՞ Անահիտը, էս լեռները, մեր էպրատը (եփրատը), Աստղաբերդը⁴⁵... Միք (մենք) օր, ժամ չունինք, հայ չի՞նք: Հլա մէկը էկեր (եթէ) կունայ հայուն բան-ման ասա, քըրֆէ, շան սատակ կանիմ»⁴⁶:

Այս բնոյթի պատմութիւնները Գ. Հալաջեանի երեւակայութեան արդիւնք չեն: Դրանում եւ համոզուեցի 2011 թ. Դերսիմում, որտեղ դրանցել եմ նմանօրինակ մի շարք պատմութիւններ, որոնք պատրաստուում են հրատարակութեան: Տեւական ժամանակ ազատ լինելով պաշտօնական կրօնական ինստիտուտների «խնամակալութիւնից»՝ դերսիմցիներն ազատօրէն զարգացրել են իրենց կրօնական նախընտրութիւնները:

Դերսիմում նախաքրիստոնէական կրօնական հայեացքների կենսունակութեան

44 Հալաջեան, էջ 257:
45 Աստղաբերդ անունով կար գիւղ, լեռ եւ քերդ: Աստղաբերդը համարում էր Դերսիմի արեւելեան կողմի պատնէջը (Հալաջեան, էջ 20):
46 Նոյն տեղում, էջ 73:

մասին է վկայում նաև հեթանոսական սրբազան օջախները խորհրդանշող Մոգտուն, Թիլ անուններով բնակավայրերի առկայությունը: Պատմական Հայաստանի ողջ տարածքում այնքան Թիլ եւ Մոգտուն անուններով բնակավայր չկայ, որքան Դերսիմում, անուններ, որոնք ուղղակիորեն կապում են նախաքրիստոնէական պաշտամունքներին եւ, զարմանալիորէն, մինչեւ քսաներորդ դարակիզը, իսկ երբեմն՝ ցայսօր, շարունակում են սրբազան տարածքներ լինել տեղի բնակչութեան համար, ուր գնում են ուխտի, զոհաբերութիւններ են անում եւ որտեղից սպասում են դանազան արձագանքներ՝ առողջութեան, յաջողութեան: Խողաթի շրջանի Մոխտուր (Մոգտուր) գիւղում «չորս արհեստական բլուր կար, որոնց տեղացիները Հողգար էին ասում, եւ, ըստ նրանց, դրանց տակ իրենց նախնիների գերեզմաններն էին»⁴⁷: Խողաթի շրջանում Մոխտուրից արեւելք, Ղլիբտա գիւղը «կոչուել է Մոգտուն»⁴⁸: Բալուի շրջանում նոյնպէս կար Մոգտուն անունով գիւղ⁴⁹: Չարսանձագի շրջանի Մոխտուրի (Մոգտուն) գիւղում Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցու կողքին կային նաեւ Ս. Արիստակէս, Ս. Վրթանէս եկեղեցիներ, սակայն սրանք բաւարար չէին, դրանց կողքին կային նաեւ Ս. Բարդուղիմէոս, Ս. Յուսիկ, Ս. Նիկողայոս, Ս. Ներսէս եկեղեցիների աւերակները⁵⁰: Ինչքան «զօրաւոր» կամ սիրուած պէտք է լինէր այս Մոգտունը, որպէսզի ջանային այդքան հզօր քրիստոնէայ սրբերով ճնշել, «ծածկել» նրա դերը:

Երզնկայի հեթանոսական աստուածութիւններով առատ հնագոյն Թիլ աւանի մասին յիշեցինք: Սա այն Թիլն է, որ Գրիգոր Լուսաւորչի անձնական կալուածքը

47 Հալաշեան, էջ 36:
 48 Նոյն տեղում, էջ 37:
 49 Նոյն տեղում, էջ 84:
 50 Նոյն տեղում, էջ 96:

դարձաւ Եկեղեաց գաւառի հետ միասին⁵¹, Դ. դարից կաթողիկոսանիստ էր, ուր միմեանց յաջորդել են 15 կաթողիկոսներ եւ որտեղ ամփոփուել են Հայոց Հայրապետներ Արիստակէս Ա-ի, Ներսէս Մեծի եւ Հայոց Պապ Թագաւորի աճիւնները: Այս Թիլ աւանը, ինչպէս վերը տեսանք, հնագոյն պատմութիւն ունի: Այստեղ էր գտնուում Նանէ աստուածուհու մեհեանը, այս Թիլն, ըստ Ագաթանգեղոսի, կոչուել է Նանէական եւ մեհեանները քանդուել են անձամբ Գրիգոր Լուսաւորչի կողմից:

Այս կարեւոր Թիլից գատ, կային այլ Թիլեր: Չարսանջակի շրջանում՝ Ղըզլըթիլիսէի ջրի արեւելեան ճիւղի Բերրիի ջրին միացող մասում գտնուող Թիլի մասին Գ. Հալաշեանը գրում է. «Ուր կար Մոգտուն, շրջակայքում անխուսափելի էր Թիլը (Հողաբլուր): Ունէր Ս. Աստուածածին անունով եկեղեցի»⁵²: Չարսանջակի շրջանի մէկ այլ Թիլում կար «Թագէոս առաքեալի կառուցած Ս. Սարգիս անունով եկեղեցի»⁵³: Բալուի Թիլ գիւղի մասին Ռ. Գեւորգեանը գրում է, որ այն ունէր Ս. Կարապետ եկեղեցի, իսկ գիւղից ոչ հեռու Ս. Խաչ վանքն էր, որը յայտնի էր նաեւ Թիլայ վանք անունով⁵⁴: Թիլ էր կոչուում Եփրատի աջակողմեան Գայլ վտակը⁵⁵, այն վտակը, որն անցնում էր Եկեղեաց գաւառով եւ բաժանում էր Արամազդի դուստր Նանէ աստուածուհու մեհեանով Թիլ աւանն Անահիտի մեհեանով Երիզա աւանից⁵⁶: Թիլատ

51 Անուանուել է Գաե գաւառ Լուսաւորչի, Սահակ Ա Պարթեւի մահից (439 թ.) յետոյ անցել է Մամիկոնեաններին:
 52 Հալաշեան, էջ 97:
 53 Նոյն տեղում, էջ 94:
 54 Raymond H. Kévorkian, Paul B. Paboudjian, *Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide*, Paris, Éd. Arhis, 1992, էջ 271:
 55 Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հտ. 2, Երեւան, 1988, էջ 449-451 (այսուհետեւ՝ Տեղանունների բառարան):
 56 Նոյն տեղում, էջ 457: Հաւանաբար ղեկն այս գետակը՝ Թիլչա անունով, Գաւառի ունի Գ. Ստե-

սի էր կոչուում Մեծուր լեռան արեւմտեան գագաթից սկիզբ առնող Եփրատի վտակներից մէկը⁵⁷, Թլա անունով բնակավայր է վաւերացնում Լինչի քարտէզը Եփրատի ձախ ափին՝ Ակնից մի փոքր հիւսիս, եւ այլն: Թլլպաղայ անունով բերդ կար Չորրորդ Հայքի Պաղնատուն գաւառում⁵⁸, Թիլ Անձիտ բերդը Չորրորդ Հայքի Անձիտ գաւառում էր⁵⁹, ինչպէս Անձիտում էր նաեւ Թիլ Կաթին, Թլկատին անունով գիւղը⁶⁰: Թիլ անունով բնակավայրերի եւ այլ տեղանունների պակաս չկար ոչ միայն Դերսիմի, այլեւ բաւական մեծ շրջագծով յարակից տարածքներում: Թիլ անունով գիւղ կար Դիարբեքլիի մօտ, իսկ Դիարբեքլիի Մարդինի գաւառում էր Թիլ Արմէնը, Թիլ անունով գիւղաքաղաք՝ Բիթլիսի Սղերդ գաւառում, Եղեսիայում էր «Թիլ Աւետեաց» անունով բերդը եւ քաղաքը⁶¹, որը կրում էր նաեւ Թլպաղար, Թլպաղտ⁶² յատկանշական անունները, չխօսելով արդէն Կիլիկիայի յայտնի Թիլ Ամտուն (Համտուն) ամրոցի մասին: Թիլ կար Սասունի Հազգո-Խաբըլըղի գաւառակում, Մուշի Բուլանըխում, Թլնայ աղբիւր կար Սասունի Խիանք գաւառակում⁶³: Կարելի է ենթադրել, որ յիշեալ «Թիլ»-երի գոնէ մի մասը Եկեղեաց գաւառի յայտնի մեհեանակիր Թիլից է «ծնուել»: Յամենայն դէպս, դրան շատ նման է Թիլ Աւետեաց անունը: Դրա անուղղակի վկայութիւններից կարող է լինել այն, որ պատմական Հայաստանի ողջ տարածքում Թիլ անունով բնակավայ-

րերը, գետերը, լճակները, սրբազան տարածքները, հազուադէպ բացառութիւնները չհաշուած, գտնուում էին Հէնց Բարձր Հայքում, մասնաւորապէս՝ ներկայիս Դերսիմի, Երզնկայի, Դիարբեքլիի, Բիթլիսի տարածքներում եւ մասամբ՝ Կիլիկիայում:

Հ. Աճառեանը «Թիլ» բառը կապում է սեմականից վերցուած արաբական *tail* (բլուր, Հողաբլուր) բառի հետ, որից փոխառեալ է դիտում նաեւ պարսկական *tal* (կոյտ, դէպ) եւ քրդական *til* (բլրակի գագաթ) բառերը⁶⁴: Հր. Աճառեանի «Թիլ» բառի վաղ շրջանի օգտագործման շուրջ Սամուէլ Անեցուց եւ Միխիթար Այրիվանեցուց առնուած օրինակներից մի քանիսը վկայում են Թիլ տեղանքի եւ բառի նախնական մշակութային նշանակութիւնը. «Շամիրամ շինեաց թէր բլուր ի հողոյ կուտեալ ամրոց, բայց մեք գտաք պատճառ թլա-ցացոյ... (պատմում է, թէ Աստուծոյ հրամանով մեհեանները կործանուեցան, կուտքերը գետնի տակ անցան եւ նրանց վրայ բլուրներ ձեւացան), մինչեւ ցայսօր դեւք կախարդք առ թլովդ գործելով զարուեստս իւրեանց»; «Շամիրամ կին Նինոսի շինեաց թէր, բլուր ի հողոյ կուտեալ ամրոց, բայց այլք վասն թլոյոյ ասեն թէ... գկախարդութիւնս առ թլօքն առնեն»; «Շինեաց Շամիրամ... եւ արար Հողաբլուրս ի վերայ նոցա, զոր Թիլս անուանեն»⁶⁵:

64 Հր. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հտ. 2, Երեւան, 1973, էջ 184 (այսուհետեւ՝ Աճառեան):
 65 Աճառեան, հտ. 2, էջ 183-184: Ա. Յակոբեանը, անդրադառնալով Թիլ-ով վաղ տեղանունների առատութեանը, այդ թում՝ Դիլիջան տեղանունը Գայլապատ գետի մոտ իջնում-իւս $< *իջ-թիլ-ան > *թիլ-իջ-ան$ կապին, գտնում է. որ թերեւս պէտք է փնտրել Հր. Աճառեանի առաջարկից տարբերող այլ տարբերակներ (Ա. Յակոբեան, *Հայ ժողովրդի էթնոհամայնական գործընթացի պատմամշակութային առանձնայատկութիւնները*, «ՎԷՄ» համահայկական հանդես, Ե (ԺԱ) տարի, 2013, թիւ 1, էջ 50, ծմբ. 70):

Փանեանը, երբ Գկարագրում է երգակահայերի սարսափելի շարքը 1915 թ. Թիլչայի յովտում (տե՛ս Գ. Ստեփանեան, *Միջառանջայի՛մ օրեր*, էջ 122-126):
 57 Հալաշեան, էջ 12:
 58 Ուոհայեցի, էջ 73. *Տեղանունների բառարան*, հտ. 2, էջ 457:
 59 Տեղանունների բառարան, հտ. 2, էջ 451:
 60 Նոյն տեղում, էջ 456:
 61 Նոյն տեղում, էջ 451:
 62 Նոյն տեղում, էջ 457. *Ուոհայեցի*, էջ 267-268:
 63 Տեղանունների բառարան, հտ. 2, էջ 457:

ձեռքին. քաջ յայտնի Մամիկոնեանների տունը, ապաստան գտնելով Սասունի լեռներում, տիրում էր Մուշին եւ Խնարպուտին: Աւելի հեռու՝ Դերսիմի ուղղութեամբ, կառավարում էին այն պաւլիկեան իշխանները, որոնց դէմ մարտնչում էին բիւզանդական կայսրերը 9-րդ դարում»⁸⁹: Ի դէպ, այս կապակցութեամբ առաջադրուել են վարկածներ Մամիկոնեանների մի մասի՝ Դերսիմի տարածքում քրդացման-ալեւիացման մասին⁹⁰:

Վերադառնալով Դերսիմում ծաթ կամ հողում հայերի խնդրին՝ անհաւանական չի թւում, որ այս գիւղերի բնակիչները լինէին Վասպուրականի Սենեքերիմ Արծրունի թագաւորի՝ 1021 թ. Վասպուրականը յուճաց Վասիլ կայսրը թողնելուց յետոյ Սեբաստիայի նահանգ տեղափոխուելիս նրա հետ գաղթեցրած 400.000 մարդկանց յետնորդները: Նրանք կարող էին այստեղ հաստատուել մինչ Սենեքերիմ Եփրատի եզերքին կառուցում էր Ակն եւ Արաբկիր քաղաքները, հաստատուել եւ իրենց հետ բերել նաեւ իրենց առանձնացնող անունները՝ ծաթ կամ հողում: Իսկ յետագայում, երբ տեղի բնակչութիւնը «հողում» էր անուանում Բիւզանդիան նուաճած թուրքերին, հայ-հողումների թրքացումը մեծ դժուարութիւն չէր ներկայացնում:

Այսպէս թէ այնպէս, մեզ հետաքրքրող տարածքում կրօնական այլախոհութեան աւանդոյթները պէտք է ծլարձակէին թէ՛ հայկական, թէ՛ բիւզանդական պաշտօնական գաղափարախօսութիւնների դէմ:

89 Ն. Աղոնց, էջ 101:

90 Այս մասին գրում են ժ. Դ. Դերսիմում եղած քաղաքային բոլոր հայ, երբեմն նաեւ՝ ոչ հայ հեղինակները (Անդրանիկ, Գ. Հալաքեան, Գ. Ա. Երեսանեան («Պատմութիւն Զարաւանգի հայրոց», Պէյրութ, 1956), Վահագն Գարագաշեան («Տէրսիմ եւ հայերը», Հորիզոն, 2009-07-23), Մարկ Սայքս («The Kurdish tribes of the Ottoman Empire», Journal of the Royal Anthropological Institute, 1908, vol. 38):

Իսկապէս էլ, մինչ միջնաշխարհի Հայաստանը եւ հայկական կրօնական ինստիտուտները հարիւրամեակներով դիմադրում էին բիւզանդական քաղկեդոնականութեանը, մինչ հայկական իշխանական տները ճշգրտում էին իրենց դիրքորոշումը, Ծովք-Բարձր Հայք, ետնագոյն Դերսիմի տարածքում հասունանում էր ըմբոստութիւնն առհասարակ քրիստոնէական ինստիտուտների եւ իշխող սոցիալական կարգերի դէմ: Զ.-ԺԱ. դդ. ողջ հայկական բարձրաւանդակում լայնօրէն տարածուած պաւլիկեան եւ ապա նաեւ՝ թոնդրական սոցիալ-կրօնական շարժումները փաստացի ծնունդ տան «Մեծ Դերսիմի» տարածքում: Դա, անշուշտ, օրինաչափ էր: Եկեղեցաց եւ Դարանաղի գաւառների տարածքները շատ տեւական ժամանակ եղել են կրօնական դրամատիկ իրադարձութիւնների թատերաբեմ, դժուարութեամբ են բաժանուել նախաքրիստոնէական շրջանի հաւատալիքներից, եթէ առհասարակ հրաժարուել են: Այս տարածքի բնակչութիւնը մշտապէս եղել է կրօնական յեղափոխութիւնների եւ այլախոհութեան առաջատար, բազմազգ լինելով՝ մշտապէս իրեն համեմատաբար ազատ է զգացել «ազգային-պետական» որոշումների պարզ հնազանդութիւնից եւ դիմադրել է դրանց: Տարածքում մշտապէս ապաստանել եւ թաքնուել են հալածեալները, այդ թւում՝ կրօնական հալածեալները:

Չանդրադառնալով այս սոցիալ-կրօնական շարժումների յայտնի գաղափարախօսութիւններին, որոնք խարսխուած էին ազատութեան եւ հաւասարութեան գաղափարների վրայ, յիշենք միայն, որ Պաւլիկեան շարժման կարեւոր կենտրոն էր դարձել Բարձր Հայքի Մանանաղի գաւառը, որտեղ բուռն գործունէութիւն էր ծաւալել պաւլիկեանների առաջին առաջնորդներից Մանանաղ գիւղում ծնուած Կոստանդին Սիլուանը: 654 թ. վերջինս հիմնեց հաւասարութեան սկզբունքով քրիստոնէական

համայնքներ: Է. դ. պաւլիկեան հերթական առաջնորդ Գինեսիոս Տիմոթիոսը նոյնպէս շարժման կենտրոնը տեղափոխում է Մանանաղ գիւղ: Չնայած բոլոր տեսակի ճնշումներին, շարժումն աւելի ու աւելի էր աճում տարածուելով ողջ Բիւզանդիայով: Ը. դ. վերջերին շարժման գլուխ անցած Սերգիոս Տիւքիկոսն արդէն գլխաւորում էր հարիւրհազարաւորները: Պաւլիկեանները կենտրոնացել եւ նոյնիսկ զօրակայան էին հիմնել պատմական Փոքր Հայքում, նրա եւ Մեծ Հայքի Բարձր Հայք աշխարհի սահմանագլխին, Եփրատի աջակողմեան վտակ Տեւրիկ (Մելաս, Չալթ-սու) գետի ստորին հոսանքում, Սեբաստիայի եւ Կարինի միջեւ ընկած Տեւրիկ (թուրքերէն՝ Դիւրիգ) քաղաքում՝ յենակէտ ունենալով Տեւրիկի ամրոցը⁹¹:

Մօտակայքում էր գտնուում նաեւ Աբարա ամրոցը՝ պաւլիկեանների յայտնի յենակէտը մինչեւ Տեւրիկի հիմնադրումը: Տեւրիկից շարժումը գլխաւորում էր զօրավար Կարբէասը: Յայտնի են նրանց ուղի մական յաղթանակները 855, 859, 860, 861 թուականներին եւ 863 թ. պարտութիւնը Պոսոնի ճակատամարտում, որի ժամանակ զոհուեց նաեւ Կարբէասը: Պաւլիկեանների ղեկավարութիւնն ստանձնած Խրիստիբոլը նոյնպէս մինչեւ 873 թ. իր մահը, յաղթական էր եւ մէկը միւսի հետեւից գրաւեց մի շարք խոշոր քաղաքներ: Շարժման մասնակիցների թիւը կտրուկ աճում էր: Պաւլիկեանները կանոնաւոր պատերազմներ էին մղում Բիւզանդական կայսրութեան դէմ՝ անդամ օգնելով արաբներին:

Բիւզանդական կայսրութեանը մեծ դժուարութեամբ յաջողուեց ճնշել պաւլիկեաններին միայն 873 թ.՝ ծանր կռիւներից

91 Բիւզանդական Բարսեղ կայսրը 873 թ. գրաւել է քարուքանդ է արել պաւլիկեան շարժման այդ հզօր կենտրոնը: Ժ. Ա. դ. վերջերի Տեւրիկի տիրել են սելջուկները, 1242 թ.՝ թաթար-մոնղոլները, իսկ ժ. Դ. դ. սկզբին՝ օսմանեան թուրքերը:

յետոյ, պաւլիկեանների վերջին յենարան Տեւրիկ ամրոցում, որն ընկնում է Մեծ Դերսիմի սահմանների մէջ: Պարտուած պաւլիկեաններին բռնութեամբ գաղթեցնում էին Թրակիա եւ Մակեդոնիա: Շարժման ուժից վախեցած բիւզանդական համայնքը Յովհաննէս Չմշկիկ կայսրը, որն յազգի Յովհաննէս Չմշկիկ կայսրը, որն ինքը հէնց Դերսիմի տարածքից էր՝ Ծովքի Փոքր կամ Շահունեաց Ծովք գաւառին համապատասխանող Չմշկաձագից, 970 թ. համապատասխանող Չմշկաձագից, 970 թ. մեծ թուով պաւլիկեաններ է տեղափոխել Բալկաններ եւ նոյնիսկ նրանց օգտագործել սլաւոնների դէմ կռիւներում: Բնական ծել սլաւոնների դէմ կռիւներում: Բնական է, որ ջախջախուած պաւլիկեանների առէ, որ ջախջախուած պաւլիկեանների բնանուաղն մի մասը պէտք է թաքնուէր բնականից խիստ անառիկ Դերսիմում: Նրանց մեծ մասն, իհարկէ, հայ էր, բայց՝ նաեւ յոյն, ասորի:

Պաւլիկեաններով, սակայն, խնդիրը չվերջացաւ: Դեռեւս պաւլիկեանների շարժումը չէր ճնշուել, երբ սկսեցին ծաւալուել թուրք չէր ճնշուել, երբ սկսեցին առհասարակ Բարձր Հայքում էին կենտրոնասարակ Բարձր Հայքում էին կենտրոնացած, Մանանաղի գաւառի Կաշէ, Աղիւս, ցած, Մանանաղի գաւառի Կաշէ, Աղիւս, թուրքալ եւ այլ գիւղերում: Ն. Աղոնցը թուրքալ եւ այլ գիւղերում: Ն. Աղոնցը գրում է. «Դերսիմի բարձունքները յարակից տեղավայրերով այս աղանդաւորների կից տեղակէտն էին: Ինչ վերաբերում է Եփրատի ճախ ափին, Մամախաթունից մինչեւ տի ճախ ափին, Մամախաթունից մինչեւ Բալու, այն գլխաւորապէս բնակեցուած էր Պոսոնի ճակատամարտում, որի ժամանակ զոհուեց նաեւ Կարբէասը: Պաւլիկեանների ղեկավարութիւնն ստանձնած Խրիստիբոլը նոյնպէս մինչեւ 873 թ. իր մահը, յաղթական էր եւ մէկը միւսի հետեւից գրաւեց մի շարք խոշոր քաղաքներ: Շարժման մասնակիցների թիւը կտրուկ աճում էր: Պաւլիկեանները կանոնաւոր պատերազմներ էին մղում Բիւզանդական կայսրութեան դէմ՝ անդամ օգնելով արաբներին:

Թոնդրակեցիները չէին սահմանափակում հաւասարութեան (այդ թւում՝ սեռերի հաւասարութեան), հոգեւորականների եւ եկեղեցու մերժման գաղափարներով: Նրանք նաեւ քանդում էին եկեղեցի-

92 Ն. Աղոնց, էջ 106:

չի վերադարձնում՝ պահելով այն Հալւորի Ս. Կարապետ վանքում. «Գրեցի, որ չեմ իտար Ս. Ներսէսի մասունքը: Եթէ աղ հայտու սրբութիւնն է՝ մենք ալ հայ ենք, եթէ այդ հայու վանք է՝ այս ալ հայու վանք է. հետեւաբար աւելի լաւ է, որ այդ մասունքը մեր վանքին մէջ մնայ, ոչ թէ այնտեղ, ուր միշտ երկիւղալի է գողերու պատճառով»¹¹⁵: 1912 թ. Հալաջեանին այս պատմութեան աւարտն ալեւինների փրէ-փիրան (փիր նշանակում է մեծ, բարձր, փրէ-փիրան՝ ամենամեծ, ամենաբարձր կրօնապետ, փրբերի փիր) այլ կերպ է պատմել: Ըստ այս տարբերակի՝ Հալւորի Ս. Կարապետի քահանան դիմել է փրէ-փիրանին եւ սուրբ Կարապետի անունից պահանջել մասունքը: «Եւ որովհետեւ մենք ոչինչ չենք կարող մերժել այդ անունով կատարուած դիմումին, ստիպուած մասունքը վերադարձրինք՝ պայման դնելով, որ այն չվերադարձուի Սուրբ Գրիգոր Լուսաւորչի վանք, այլ պահուի մեր վանքի մէջ»¹¹⁶: Այսպիսով՝ Հալւորի Ս. Կարապետ վանքը ալեւինների (կամ՝ ալեւիացածների) բնորոշմամբ՝ «մեր վանքն» էր, իսկ «սրբի մասունք» (սուրբ Ներսէս, թէ սուրբ Կարապետ) ունեցող Հալւորի Ս. Կարապետ վանքի շուրջ պատուող աւանդազրոյցները միանգամայն կարող էին կասկածներ կամ, գուցէ, ցանկութիւններ ծնել այդ մասունքը ալեւինների սուրբ Հուսէյինի մասունքի հետ նոյնականացնելու շուրջ, առաւել եւս, որ սուրբ Հուսէյինի մասունքն ալեւիական աւանդազրոյցում հայ քէշիշի կողմից փրկուած մասունք էր:

Սոյն պատմութիւնն ունի նաեւ երրորդ, թերեւս առաւել ուշագրաւ զուգահեռը: Բանն այն է, որ Հուսէյինի փրկած հայ քէշիշի պատմութեան աւանդազրոյցը լայնօրէն տարածուած էր ողջ Դերսիմում, եւ դրա վերաբերեալ տեղեկութիւններ են

115 Նոյն տեղում, էջ 108:
116 Հայաջեան, էջ 255:

տալիս այլ հեղինակներ եւս, մասնաւորապէս՝ հայ հեղինակներից Գարեգին Սրուանձտեանցը եւ Անդրանիկը: Ի տարբերութիւն իմ կողմից գրանցուած պատմութեան, յայտնի աւանդազրոյցներում խօսքը գնում է ոչ թէ Հուսէյինի կտրուած գլխի փրկութեան, այլ՝ նրա կեանքի փրկութեան մասին: Երկու հեղինակներն էլ գրանցել են Հուսէյինի կեանքի փրկութեանն իր որդիներին զոհաբերելու գնով նպաստած հայ քահանայի մասին զազայեղէն երգուող երախտապարտութեան երգը: Դրանք շատ ընդհանուր են՝ չնչին թուացող տարբերութիւններով: Անդրանիկը, մասնաւորապէս, յղելով նաեւ 1880 թ. «Մասիս» թերթում թարգմանաբար տպագրուած երգի տեքստը, գրում է. «Դերսիմի զըզըբաշները հային միշտ բարեկամ են համարում եւ յաճախ են յիշում, որ երբ Իմամ Հիւսէյինի վտանգ էր սպառնում մահաբեկականներից՝ նրան մի հայ քահանայ է պահել իր տանը: Եւ երբ մահաբեկականները խնդրել են նրան սպանել, իբրեւ թէ իր եօթ զաւակներին զոհաբերել է, նրանց զուխները հերթով օսմանցիներին յանձնելով, բայց Իմամին պահպանել է: «Տէտէ» կոչուած կրօնապետները յուզուած երգում են.

Տես Աստուծոյ գործը,
Հայ քահանայն գլխատեց
Իւր եօթն զաւակները,
Որոնց կեանքը ես կ'ողբամ:

Քէաֆիրներն հետամուտ էին
Զիմամ Հիւսէյինն սպանել,
Քահանայն զաւակներն զոհեց -
Ի փրկանս իմամին:

Իմամը դառնապէս լացաւ,
Երկնից հրեշտակները կոծեցին,
Երկրին այս ողբոց արձագանք տուաւ,
Արիւններն բողոք բարձին:

Յետոյ քէաֆիրք յուսահատ,
Մեկնեցան քահանային տնէն,
Եւ մեր միս իմամները
Գլխատեցին այլուր:

Աստուած վարձահատոյց քահանային,
Որ վասն ազատութեան իմամին
Իւր զաւակներն գլխատելէն ետքը
Բանտարկուեցաւ քէաֆիրներէն:

Իմամ Ծաֆար գաղտնապէս բանտը
մտաւ,
Քահանային ձեռքը համբուրեց,
Անոր օրհնութիւնն առաւ,
Եւ կեանքի աջօք Յիսուսը տեսաւ:

Քահանային կ'աղօթէր միշտ,
Իւր աղօթքը երկինք կը հասներ,
Օղերուն մէջ ճրոտողոյ թոչունք
Աստուծոյ վրէժնադրութիւնը կը հայցէին:

Վերջին դատաստան պիտի ըլլայ,
Յիսուս դատաւոր պիտի կանգնի,
Հասան եւ Հիւսէյին պիտի ամբաստանեն
Քէաֆիրները պիտի պատժուին:

Յիսուս արդէն լոյս էր,
Ալին ալ լոյս պիտի ըլլայ,
Հաճի Պէկթաշն¹¹⁷ ալ բարձրագոյն

պաշտօնեայ,
Որոնք մեզի կարմիր թագեր պիտի
բաշխեն:

Վասնզի նա կարմիր թագ դրած է,
Վարդի պէս կարմիր, կրակի պէս փայլուն,
Եւ իւր արագընթաց ձին հեծած է
Աղեղն ընդդէմ քէաֆիրներուն¹¹⁸:

Գարեգին Սրուանձտեանցը 1878 թ. Դերսիմ իր այցելութեան ժամանակ նոյնպէս գրանցել է այս նիւթը. «Հայ քահանայի մը յիշատակը կ'ընեն ոմանք, որ ասոնց մէկ մեծ Սայիտը ազատեց է հաւատոյ հալածչաց ձեռքէն, պահելով զայն իր տան մէջ, եւ անոր փրկանքին համար իր տան զաւակները զոհեց է: Երբ մը կամ եօթն զաւակները զոհեց է: Երբ մը կամ շարական մը յօրինած են քահանային օրհնութեան յիշատակին, յորմէ մաս մը թարգմանելով կը դնեն այստեղ.

Մտիկ ըրէք, Աստուծոյ մէկ գործը պատմեմ,

-Հայ քահանան իր եօթն որդիք նահատակել տաւ

Ողբալով օրհնեք անոնց յիշատակը:
Սայիտ Հուսէյին սպանիչներէն հալածեալ,

Հայ քահանային ապաստանեցաւ,
Քահանան իր եօթն որդիք զոհեց,

Սայիտ Հուսէյինն՝ ազատեց:

¹¹⁷ Հաջի Բեկթաշ – Ժ.Գ. դարի սուֆի խորասանից. Բեկթաշի կոչուող սուֆիական օրդէնի էպոնիմը: Հաջի նշանակում է Մեքքա ուխտագնացութիւն (հաջ) կատարած մարդ: Համարում է իրականացնող: Ամենայն հաւանականութեամբ, թուրքական ծագում ունէր: Ենթադրում է, որ խորասանից փակել է սոնդուլների կողմից Պարսկաստանը նուաճելուց յետոյ, յայտնուել է Ամասիայում, որտեղ անկախ սուլթանական իշխանութեան դէմ մասնակցել սուլթանական իշխանութեանը 1239 թ. ապստամբութեանը, ապա քաշուել է Սուլուշակարաքեօ գիւղ, որն այժմ կրում է Հաջի-Սուլուշակարաքեօ գիւղ, որն այժմ կրում է Հաջի-Բեկթաշ անունը, եւ գրադուել քարոզչութեամբ: Բեկթաշ անունը, եւ գրադուել քարոզչութեամբ: Աւանդութեան համաձայն՝ Հաջի Բեկթաշն է հիմնել բանակի եմիշերական գնդերը եւ հնարել

նրանց գլխարկները (հաւանաբար այս ասանդութեամբ է պայմանաւորուած չափածոյում «մեզի կարմիր թագեր պիտի բաշխեն» տողը): Եմիշերիկների ուսման կամ գնդերն օսմանեան ժամանակ կագրութիւններում կոչուել են Բեկթաշի գնդեր, եմիշերիկներն իրենք՝ Բեկթաշի եղբայրութեան անդամներ, իսկ նրանց հրամանատարները՝ աղա Բեկթաշի:
¹¹⁸ «Մասիս», 1880, թիւ 2638, 5 լուսն, Թ. Թարաբեան, յԱրաբկիր (Անդրանիկ, էջ 201-202):

- Աստուած օրհնէ Հայ քահանայան,
- Նա ՚ի վերջոյ ՚ի բանտ մատնւեցաւ:
- Սայիտ Ջաֆար բանտը մտաւ ծածուկ,
- Համբուրեց Հայ քահանային օրհնեալ աջը,
- Եւ անոր օրհնութիւնն առաւ:
- Վերջին դատաստան պիտի ընէ Յիսուս,
- Հասան եւ Հիւսէյին Յիսուսի քով պիտի կեանան,
- Չարերուն պատիժ պիտի խնդրեն, բարիներուն վարձք:
- Յիսուս լոյս է, Ալին՝ ճառագայթ,
- Լուսեղէն կարմիր թագով պիտի պսակեն մեր գլուխը:
- Նա դրած է իր գլուխը կարմիր թագ,
- Բոցի պէս կարմիր, կարմիր վարդի նման,
- Կարմիր ձիու վրայ, աղեղն ի ձեռնին լարած:
- Օրհնենք Հայ քահանային յիշատակը...»¹¹⁹:

Ես գիտակցուած եմ կողք կողքի տեղադրուած երգի՝ միմեանց համարեա կրկնող տեքստերը, քանի որ կրօնական փիլիսոփայութեան, ըմբռնումների, գուցէ նաեւ՝ ժամանակագրութեան տեսանկիւնից այստեղ որոշ նրբիմաստ տարբերութիւններ կան: Օրինակ՝ Անդրանիկի տեքստում «Յիսուս դատաւոր պիտի կանգնի, Հասան եւ Հիւսէյնն պիտի ամբաստանեն», իսկ Գ. Սրուանձտեանցի տեքստում «Վերջին դատաստան պիտի ընէ Յիսուս, Հասան եւ Հիւսէյնն Յիսուսի քով պիտի կենան» (ամ-

119 Սրուանձտեանց, հտ. 2, էջ 396:

բաստանութեան մասին խօսք չկայ), կամ՝ Անդրանիկի տեքստում «Քէաֆիրները պիտի պատժուին» (այսինքն՝ գեաւուրները, անհաւատները պիտի պատժուեն), իսկ Գ. Սրուանձտեանցի տեքստում՝ «Չարերուն պատիժ պիտի խնդրեն, բարիներուն վարձք» (այստեղ չարն ու բարին կրօնական չափում չունեն), Անդրանիկի տեքստում «Յիսուս արդէն լոյս էր, Ալին՝ ալ լոյս պիտի ըլլայ», իսկ Սրուանձտեանցի տեքստում «Յիսուս լոյս է, Ալին՝ ճառագայթ» (երկու տեքստերում էլ Ալին դեռեւս լոյս չէ, բայց երկրորդում՝ արդէն ճառագայթ է): Առաջին տեքստում առկայ է «Հաճի Պէկթաշը», ով Յիսուսի եւ Ալիի հետ «կարմիր թագեր պիտի բաշխեն», երկրորդում «Հաճի Պէկթաշը» բացակայում է, եւ միայն Ալին ու Յիսուսը «լուսեղէն կարմիր թագով պիտի պսակեն մեր գլուխը»: Առաջինում «Հաճի Պէկթաշը» «իւր արագընթաց ձին հեծած է՝ աղեղն ընդդէմ քէաֆիրներուն», երկրորդում կրկին միայն Յիսուսն ու Ալին են «կարմիր ձիու վրայ, աղեղն ի ձեռնին լարուած», բայց քէաֆիրներին-անհաւատներին այդ աղեղից կարծէք թէ վտանգ չի սպառնում: Չանդրադառնալով յիշեալ տեքստերի այս նրբութիւններին՝ ասեմ միայն, որ ալեւիզագաների կենսափիլիսոփայութեանն ալեւի համապատասխանում է երկրորդ տեքստը, քանի որ նրանք որեւէ կրօնադաւան խմբի անհաւատ չեն համարում, չեն անուանում, եւ առհասարակ կրօնական ազդեցիկ կամ սպառնալիք չունեն ու չեն ընդունում: Այնուամենայնիւ, սուեալ դէպքում ինձ առաւել հետաքրքրողն այն է, որ Անդրանիկին եւ Գ. Սրուանձտեանցին յայտնի երգերի տեքստերում խօսքը գնում է հայ քահանայի կողմից սուրբ Հուսէյնի կեանքի փրկութեան մասին, իսկ իմ կողմից գրանցուած աւանդադրոյցում խօսքը գնում է արդէն սպանուած սրբի գլխի փրկութեան մասին: Ալեւին, իմ գրանցած աւանդադրոյցում խօսքն առհա-

սարակ գնում է «Հուսէյնի ժառանգների» ծագումնաբանութեան, թերեւս՝ Դերսիմում Հուսէյնի «ժառանգների»՝ ալեւիների ծագումնաբանութեան մասին: Այլ խնդիր է, որ այս «ծագումնաբանական տեքստը» խորապէս ազդուած է իսլամական-շիաական եւ հայկական աւանդադրոյցներից, եւ այս ծագումնաբանական պատմումն խօսքը ոչ միայն «հայկական օգնութեան» մասին է, այլեւ՝ «հայկական արեան» վարկածի («հայ քէշիշի» օգնութեամբ եւ նրա դատեր մասնակցութեամբ): Ալեւին, որոշ թէպէտութեամբ կարելի է առաջ քաշել վարկած, որ իմ գրանցած տեքստը, թերեւս, ալեւի ամբողջականն է, ընդգրկում է «ծագումնաբանութեան ամբողջ շրջանը»: Օրինակ՝ իմ կողմից գրանցուած տեքստում դէպքերի դարգացումներն սկսում են Շամից, եւ Հուսէյնի գլուխը Անատոլիա է տարւում, միաժամանակ Հուսէյնին, յետագայում նաեւ «հայ քէշիշին» ու նրա դատերը սպառնացող վտանգն «ասկեարներից» է, այլ կերպ ասած՝ ժամանակագրութիւնն առնուազն է. դարից՝ իսլամի բաժանման սկզբից մինչեւ օսմանեան «ասկեարութիւնը», տարածական՝ ներկայիս Սիրիայից մինչեւ Թուրքիա, իսկ ահա չափազանց տեքստերից առաջինում (Անդրանիկ) «քէաֆիրներն հետամուտ էին Զիմամ Հիւսէյնին սպանել» (ալիսյայտ է, որ սա թուրքական միջավայրի ձեւակերպում է, ըստ որի մահմեդականին սպառնում են «քէաֆիրները»՝ անհաւատները, ովքեր թուրքական իրականութեան մէջ սովորաբար քրիստոնեաներն են: Վաղ իսլամի շրջանում արաբական աշխարհում «քէաֆիրները»՝ անհաւատները նախախաղած կրօնների հետեւորդներն էին, իսկ ըստ իսլամական աւանդադրոյցի՝ Հուսէյնին վտանգը սպառնում էր հէնց մահմեդականներից, ոչ թէ «քէաֆիրներից»: Ընդհանրապէս, իր մեկնաբանութեան մէջ Անդրանիկը գրում է, որ Հուսէյնին վտանգ էր սպառնում «մահմեդականներից», բայց

գրում է, որ նրան հետապնդողն «օսմանցիներն» էին: Բայց այս մեկնաբանութիւնը հէնց Անդրանիկինն է: Նրա կողմից յիշուած չափազանց տեքստում ո՛չ «մահմեդականներ» կան, ո՛չ «օսմանցիներ»: Փոքրականները, ինչպէս ասուեց, կան «քէաֆիր-խարէնը, ինչպէս ասուեց, կան «քէաֆիրներ»: Մինչդեռ ո՛չ մահմեդականներն, ո՛չ «օսմանցիներն» Դերսիմի ալեւիները «քէաֆիր» չեն անուանում: Երկրորդում «Սայիտ Գ. Սրուանձտեանցի տեքստում «Սայիտ Հուսէյնի սպանիչներէն հալածեալ» տոնուած գործ ունենք չէզոք «սպանիչներ», որոնք հետ, որոնց Գ. Սրուանձտեանցն իր մեկնաբանական տեքստում անուանում է «հաւատոյ հալածիչներ»: Դարձեալ յիշենք, որ բուն իսլամական աւանդադրոյցում Հուսէյնին սպանողները «հաւատոյցում հալածիչներ» չէին: Այդ շրջանում իսլամը նոյնիսկ բաժանուած չէր շիիզմի եւ սուննիզմի: Միայն Հուսէյնի մահից յետոյ նրա հօր՝ Ալիի կողմնակիցներն առանձնացան որպէս ուղղութիւն: Իմ կողմից գրանցուած տեքստը, կարծում եմ, ներառել է նաեւ Հուսէյնին՝ սուննի մահմեդական-սուրբ Հուսէյնին հալածեալ ալեւիների ներկից ու թուրքերից հալածեալ ալեւիները սպառնացող վտանգների ալեւի ընդարձակ ժամանակաշրջան եւ տարածք՝ դարձակ ժամանակաշրջան եւ տարածք՝ միաժամանակ ազդուելով վաղ քրիստոնեութեան շրջանի «կոյս յղութեան», եւնէութեան շրջանի «կոյս յղութեան», «մանկասպանութեան» յիշատակների, այդ թւում՝ գուցէ նաեւ Յովհաննէս Մկրտչի կտրուած գլխի նաեւ Յովհաննէս Մկրտչի կտրուած գլխի պատմութիւններից: Չի բացառուում նոյնիսկ, որ սոյն աւանդադրոյցը «զարգանալ է»՝ ալեւիացած հայերի կողմից՝ նեցուկ է» ալեւիացած հայերի կողմից՝ մէջ ընկնելով շիիզմին յարող ալեւիների մէջ տարածուած՝ սուրբ Հուսէյնին սպառնացող վտանգի պատմութիւնները:

Քանի դեռ խօսքը գնում է սուրբ կարապետի մասին, կարծում եմ՝ կարող եմ «հայ-ալեւիական» պատմաբանութեան սինթեզման անսպառ նիւկերացումների սինթեզման անսպառ նիւթի եւս մի վկայութեան: Գեւորդ Հալալիանը պատմում է 1912 թ. ալեւիների փի-

ընդհանուր լսած ուշադրաւ մի «հրաշա-
 փորձ իրականութիւն»։ «Մի անգամ լուսա-
 հոգի պապս՝ մեծ Սէրգե-ձեֆերը, իր հետե-
 ւորդներով օգնութեան էր գնում զալմաների
 (թուրքերի) դէմ կռուող իր թալպաներին
 (ծխեր)։ Գիշերանց, երբ անցնում էր Հա-
 լուրի վանքի տակից, տեսնում է, որ վան-
 քի դիմացի մորին (անտառը) լոյս է ընկած
 ու վառում է, իսկ ինքը՝ Միւսարեքը,
 հրեղէն թեւերով բող ձիւ վրայ հեծած,
 մզրախը ձեռին, սուրալով անցնում է իր
 վերեւից։ Պապիս լեզուն պապանձում է,
 հետեւորդները վախից ուշաթափում են,
 մինչեւ որ Տուժիկ Պապան¹²⁰ սարսուռ է,
 թնդանօթներ արձակում։ Առաւօտեան
 պարզում է, որ Միւսարեքը ջարդել է
 թրքական զօրքը եւ վերադարձել, իսկ Տու-
 ժիկը նրան դիմաւորում է իր ելտրմաներով
 (կայծակ) եւ թօփերով։ Ահա թէ ինչու նա
 մեր սուրբն է, եւ մենք երգում ենք նրա
 անունով»¹²¹։ Սոյն պատմութեան այլեւայլ
 ուշադրաւ մանրամասներից առանձնաց-
 նենք «ինքը՝ Միւսարեքը, հրեղէն թեւե-
 րով բող ձիւ վրայ հեծած, մզրախը ձեռին,
 սուրալով անցնում է... Միւսարեքը ջար-
 դել է թրքական զօրքը եւ վերադարձել...
 Տուժիկ Պապան սարսուռ է, թնդանօթներ
 արձակում... <եւ> նրան դիմաւորում է իր
 ելտրմաներով (կայծակ) եւ թօփերով» հա-
 տուածը եւ այս նիւթով վերադառնանք
 Հայոց մէջ յայտնի սուրբ Կարապետի միւս՝
 ռազմական ու, ինչպէս Հայ հետազօտող Ս.
 Յարութիւնեանն է ասում՝ «վիշապամար-
 տիկ սրբի ամպրոպային»¹²² կերպարին։
 «Տարօնի պատմութեան» հեղինակ Յովհան

120 Տուժիկ Պապան Դերսիմում ալեիների պաշտե-
 լի սուրբ սարն է։ Գտնում է Սուրբ Լոյս (Սըլիս)
 սարի ճիշտ դիմացը։
 121 Հալաքեան, էջ 255։
 122 Ս. Յարութիւնեան, Մշոյ Սուրբ Կարապետ եկե-
 դեցոյ պաշտամունքային նախահիմքերը եւ Ս.
 Կարապետն ըստ ժողովրդական ասանդոթեան,-
 «Հայոց սրբերն ու սրբավայրերը», Երեւան, 2001,
 էջ 21։

Մամիկոնեան պատմիչը մի քանի անգամ
 յիշատակում է, որ պարսիկների դէմ
 կռուելիս հայերը սուրբ Կարապետին էին
 օգնութեան կանչում, եւ նա հասնում էր
 օգնութեան. «Յանկարծակի երեւեալ այլ
 մի հերաւոր եւ ի հերաց նորա լոյս փայլա-
 տակէր...»¹²³։ Իսկ, օրինակ, Արծրունեաց
 Մարիամ տիկնոջը սուրբ Կարապետը երե-
 ւացել է «ամպի նման որոտացող», ձեռքին
 էլ՝ «սրուած արիւնաներկ գէնք»¹²⁴։ Չանդ-
 րադաւնալով գրականութեան մէջ արծար-
 ծուող այն խնդրին, որ Տարօնի Մամիկո-
 նեան ընտանիքի մի մասը հաւանաբար
 անցել է Դերսիմ եւ այնտեղ յետագայում
 «քրդացել», եւ չի բացառում, որ սուրբ
 Կարապետի այս ընկալումը հէնց նրանք
 են «ներմուծել» դերսիմեան միջավայր,
 փաստենք միայն, որ Դերսիմի ալեիական
 միջավայրը զգալիօրէն «յուրացրել» է
 հայկական սուրբ Կարապետին՝ իր նա-
 խաքրիստոնէական եւ քրիստոնէական
 կերպարներով։

Արժէ, թերեւս, աւելացնել, որ սուրբ
 Կարապետը մերձեցրել է Դերսիմի ալեի-
 ներին հայերի հետ նաեւ վարդափառի ժո-
 դովրդական համատեղ տօնահանդէսով։
 Սա, քննարկման առանձին նիւթ է։

Որքան գիտեմ, իմ գրանցած աւան-
 դազրոյցին առաւել մօտ տարբերակն ա-
 ռաջին անգամ գրանցել է 1911 թ. Դերսիմ
 այցելած բրիտանացի ճանապարհորդ Լ.
 Մոլեյնիքս-Սիլը։ Ես օգտուում եմ Մոլե-
 նիքս-Սիլի գրանցած աւանդազրոյցի՝ Կա-
 նադայում տպագրուող «Հորիզոն» շաբա-
 թաթերթի գլխաւոր խմբագիր Վահագն
 Գարազեանի հրատարակած նիւթից, ով
 յղում է L. Molyneux-Seel, «A Journey in
 Dersim», The Geographical Journal 44, no. 1

123 Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ,
 Երեւան, 1941, էջ 219, 239, 264, 371 եւ այլն (նոր
 գիտաքննական բնագիրը տես՝ «Մատենագիրք
 Հայոց», հտ. Ե, է. դար, Անթիլիաս, 2005)։
 124 Նոյն տեղում, էջ 154-155։

[1914], (էջ 49-68) հրատարակութիւնը։
 «Ըստ աւանդութեան՝ Քարապալայի ճակա-
 տամարտէն ետք յաղթական սիւննի ա-
 րաքները կը գլխատեն Հիւսէյնը՝ գլուխը
 օմմայեատներու խալիֆա Եագէտ Իպն
 Մուաուիային յանձնելու համար։ Դէպի
 Դամասկոս ճանապարհին հանգստանալու
 համար կ'իջեւանին հայ քահանայի (Մուր-
 թագա Քէշիշ) մը տունը։ Հայ քահանան
 տան անկիւնը դրուած Հիւսէյնի գլխուն
 վրայ կը նշմարէ սրբութեան ճաճանչող
 նշաններ ու կ'որոշէ սուրբին գլուխը մօտը
 պահել։ Այդ միջոցին անդրանիկ զաւակը,
 տեսնելով հօրը մտազբաղ վիճակը, հարց
 կու տայ անձկութեան պատճառին։ Քա-
 հանան կը բացատրէ կացութիւնը։ Զաւա-
 կը կ'առաջարկէ Հիւսէյնի փոխարէն իր
 գլուխը կտրել եւ յանձնել արաքներուն։
 Քահանան կ'ընդառաջէ զաւակին խնդրան-
 քին եւ թրատելով զաւակին գլուխը՝ զայն
 կը յանձնէ արաքներուն։ Սակայն սիւննի
 դիւնուորները, գիտակցելով պատահածին,
 կը պահանջեն Հիւսէյնի իսկական գլուխը։
 Քահանան իր միւս զաւակներն ալ կը զո-
 հէ նոյն ձեւով։ Վերջին զաւակին կարգը
 երբ կը հասնի, կը լսէ աստուածային ձայն
 մը, որ իրեն խորհուրդ կ'ուտայ վերջին
 զաւակին գլխատուած գլուխը օծել Հիւսէյնի
 թրատուած գլուխէն հոսող արիւնով։ Քա-
 հանան կը հետեւի ձայնին խորհուրդին։
 Արաքները կարծելով, որ քահանայի վեր-
 ջին որդիին գլուխը Հիւսէյնինն է, կը շա-
 րունակեն իրենց ճամբան դէպի Դամաս-
 կոս։ Քահանան Հիւսէյնի գլուխը յատուկ
 սենեակի մը մէջ կը դետեղէ եւ կը զարդա-
 րէ զայն գոհարեղէններով։

Քահանային միակ դուստրը, օր մը
 մուտք գործելով այդ սենեակը, կը նկատէ
 մեղրի կարաս մը։ Հիւսէյնի գլուխը կեր-
 պարանափոխուած էր մեղրի։ Հայ երիտա-
 սարդուհին կ'ուտէ մեղրը եւ անմիջապէս
 կը յղիանայ։ Շատ չանցած, երբ հայ պար-
 մանուհին օր մը կը փոնդտայ, հրեղէն
 շունչ մը կը ցայտի ունդերէն, որ կը վե-

րածուի մանուկի մը, որ քիչիւրաչաներու
 աւանդութեան մէջ պիտի դառնար Ալիի
 հինգերորդ առաքեալ իմամ Մոհամմատ
 Ալ Պաքիրը»¹²⁵։ Ծիշտ է, այն պարունա-
 կում է Հուսէյնի եւ հայուհու համատեղ
 զաւակի պատուը, սակայն ակնյայտ է, որ
 սոյն աւանդազրոյցը «սահմանափակուած
 է» բացառապէս արաքական տարածքով ու
 է. դարի դէպքերով։ Այս աւանդազրոյցում
 Դերսիմի տարածքը եւ դերսիմցիները որե-
 ւէ դեր չունեն։

**Կուռէշը, հայ քէշիշը, համատեղ կեանքի
 «դրախտային» անցեալը**

Երկրորդ աւանդազրոյցը, որ, կարծեմ,
 նոր զարգացումներ ունի Դերսիմի ալեի-
 ների ներկայիս կրօնական պատկերացում-
 ներում, նոյնպէս զգալիօրէն բազմաշերտ
 է։ Ինչպէս յայտնի է, Դերսիմի ալեիները
 սուրբ գիրք չունեն, եւ նրանց կրօնական
 ծէսերը, կրօնական պատկերացումները,
 սրբազան «տեքստերը» ժառանգում են
 բանաւոր։ Իրենց՝ Դերսիմի ալեիների
 պատկերացմամբ, «ալեիութիւնը ոչ այն-
 քան կրօնական հաւատ է, որքան արժէքա-
 յին նորմեր. արդար լինել, մաքուր լինել
 եւ ազնիւ լինել, անիրաւութիւն չանել եւ
 այլն։ Ալեի լինելը դժուար, բայց պա-
 տուաբեր է։ Ալեիները Աստու տուն չու-
 տուաբեր է։ Ալեիները մարդու մէջ է, Աս-
 տուածը ամէնուր է»։ Այս կամ այն ձեւով
 սա էին պնդում ալեիները 2011 թ. մեր
 հանդիպումների ժամանակ։

Այնուամենայնիւ, ալեիներն ունեն
 կրօնական կարիքներն սպասարկող եւ սո-
 ցիալական յարաբերութիւնները կարգաւո-
 յիտներն ու տէտէները որպէս հոգեւորա-
 կաններ, պարտական են անաչառ կերպով
 իւրաքանչիւր քրդի տուն եւ յոր-
 ալցելիլ իւրաքանչիւր քրդի տուն եւ յոր-

125 Վահագն Գարազեան, Տերսիմ եւ Ռայերը,-
 «Հորիզոն», 2009-07-23։

դորել նոցա կրօնական-բարոյական խրատ-նեւրով: Եթէ սէյիտը կամ տէտէն կ'այցելեն մէկուն տունը, - որ յաճախ խմբով կամ երկուսով կը լինի, - տնեցիները, կին, աղջիկ, տղայ, ծեր, երեխայ, - բոլորը մէկէն ընդառաջ կու գան եւ ամենայն խոնարհութեամբ կը համբուրեն նոցա փէշն ու գօտին, եւ ապա թեւն ու ուսը»¹²⁶: «Ունին իրենց կրօնականները եւ կրօնապետները, որոնց տոհմը սրբազան է եւ կը կոչուին Սայիտ, Տէտէ: ... Գիր եւ մատեան չունին, բայց աղեկ բարոյական խրատներ կ'աւանդեն, եւ տարեկան տօներուն ժողովուրդ համախմբեալ ժամանակ՝ հաղորդութեան պէս արարողութիւն մը ունին հացով եւ գինով, զորս զատ-զատ ամանին մէջ կը դնեն, եւ Սայիտն հրապարակաւ կը յանդիմանէ զմեղաւորն, որ եթէ խոստանայ այլեւս չընել մեղք, իւր խղճին կը ձգել մերձենալ ու հաղորդուի: Բայց կան անգեղջ մեղաւորներ ալ՝ զորս կը զրկէ Սայիտն հաղորդելէ եւ իր այցելութիւնը կը կտրէ այնպիսիներէ, յայտարարելով հասարակութեան, որ անոնք ալ յարաբերութիւն չունենան եւ անոր հացէն չուտեն: ... Չունեն յատուկ աղօթատեղի, բայց տեղ-տեղ սուրբ Տէտէներու գերեզմանները զմբէթով շինած են եւ աղօթողներ կարգած, ուր ուխտ կ'երթան, յաճախ կը համբուրեն, խունկ կը ծխեն, մոմ կը վառեն, մատաղ կը կտրեն, հիւանդաց վրայ Աւետարան կարդալ կու տան եւ երկիւղածութեամբ կը համբուրեն զայն, եկեղեցւոյ անօթ եւ զգեստ կը գողնան, բայց Աւետարանը կը համբուրեն»¹²⁷: Աւետարանը եւ նարեկը, բայց յատկապէս դրանք կարգացողները Դերսիմի ալեւինների համար խիստ կարեւոր էին: Թերեւս, դա պատճառներից մէկն է, որ Դերսիմի ալեւինների «կրօնական համակարգում» արագօրէն տեղ են գտել «կրօնական գիրք» ունեցող եւ այդ գրքե-

126 Անդրանիկ, էջ 166:
127 Գ. Սրուանձտեանց, հտ. 2, էջ 396:

րը կարդալ իմացող մարդկանց, յատկապէս՝ «հայ քէշիշների» հանդէպ անվերապահ յարգանքն ու ակնածանքը: Նոյն կերպ հայկական եկեղեցիներում իրենց կրօնական պահանջումներն իրացնելու ողջ Դերսիմում լայնօրէն տարածուած կրօնական պրակտիկան սկզբունքօրէն բաւարարում էր «կրօնական տարածքի հետ հաղորդակցուելու» կարիքը: «Նոքա իրենց համար յատուկ եկեղեցի չունին, եւ ոչ էլ սովորական յատուկ կամ օրական աղօթքներ, այլ եթէ բան մը ունենան Աստուծոյն խնդրելու՝ ուխտ կ'ընեն դանազան սրբատեղիներ երթալու, յաճախ մեծ-մեծ նւէրներով ու զոհերով (նայելով այլեւս կարողութեանը) ուխտ կ'երթան Հաւլորու Ս. Կարապետ վանքը եւ վանքին կը վերաբերւին այնպէս՝ որպէս չի վերաբերուի ինքը հայը: Սոյն վանքն ուխտ դնացած ժամանակ, 40-50 քայլ հեռէն ծուր չողած, թէ կին, թէ այր, կ'առաջանան դէպի եկեղեցին եւ եկեղեցին ներս մտնելու ժամանակ երեք կամ հինգ անգամ դրսի եւ ներսի դռներուն շեմքը պիտի համբուրեն, որպէսզի յետոյ համարձակութիւն ունենան ներսը ս. սեղանին առջեւ ներկայանալու: Եթէ մէկը միւսին երդում ընել տայ, անտարակոյս Հաւլորու Ս. Կարապետ վանքին համար կ'առաջարկէ, եւ եթէ մարդն երդում ըրաւ՝ կը նշանակէ, որ ինքն անմեղ է, իսկ եթէ չըրաւ՝ իր մեղքը կը խոստովանի հրապարակաւ, եթէ երեք ամենասուկալի ուրիշ ալ լինի այն, բայց միայն սուտ երդում չընէր Հաւլորու վանքին վրայ: Եթէ մէկն ուխտէ Հաւլորու վանքն երթալ, ու զանազան աննպաստ հանգամանքներու պատճառով չկարողանայ ուխտը կատարել՝ իր խղճը հանգստացնելու համար մեծ քար մը կը տնկի եւ 40-50 քայլ հեռէն ծնկաչոք կը մօտենայ տնկած քարին, կ'երկրպագէ եւ ամենայն ջերմեռանդութեամբ կը համբուրէ զայն՝ իբրեւ թէ վան-


քին սեղանն եղած լինի այն»¹²⁸: Նոյն յաջողութեամբ օգտագործուած էին Դերսիմի դեռեւս գործող եւ արդէն աւերակ միւս եկեղեցիները:

Մէկ այլ առիթի թողնելով կրօնական զանազան պատկերացումների եւ պրակտիկաների վերաբերեալ 2011 թ. իմ գրանցած նիւթերի եւ դրանց քննարկման խնդրը, փաստենք, որ 1938 թ. Դերսիմի բնակչութեան կոտորածներից յետոյ, երբ ալեւիացան նաեւ Դերսիմում դեռեւս կենդանի մնացած բոլոր քրիստոնեայ հայերը, ինչպէս նաեւ հայերի ու ալեւինների համար դադարեցին կրօնական ծառայութիւնները հայկական եկեղեցիներում ու վանքերում, վերացուեցին կրօնական գրքերը, կենցաղից ամբողջովին դուրս մղուեց հայերէնը, եւ դրան զուգահեռ տարբեր ձեւերով փորձեր արուեցին ներդնելու սուրբ մահմեդական կրօնական աղօթատեղիները՝ մզկիթները (Չամի), ալեւինների (այդ թւում՝ ալեւիացած հայերի) առաջ կանգնեց սեփական, ոչ քրիստոնէական, ոչ մահմեդական, այլ ալեւիական կրօնական շինութիւններ ունենալու հարցը: Որպէս կրօնական շինութիւններ հայկական եկեղեցիներն ու վանքերը ճանաչող մարդկանցից հաւանաբար մեծ ջանքեր պահանջուեցին այդ հարցի լուծումը գտնելու համար: Առաջինը, ինչպէս ալեւի գազանների մօտ յաճախ եղել է, «լուծում գտան» կուրէշյան աշիրեթի մարդիկ: «Կուրեշյանցիներն առանձին ազգեցիկ հեղ մ'են Տէրսիմի մէջ, որոնցմէ զատ ուրիշներն իրաւունք եւ կարողութիւն չունին կրօնական լինելու»¹²⁹: «Կուրեշյանցիները սէլիզ են»¹³⁰: Տէրսիմի գլխաւոր կրօնապետը Սէյիտ Իպրահիմ պէկն է, Կուրեշյանցիներու գեղէն սերած»¹³¹: «Կուրեշյանցիներից ընդհանուր կրօնապետ Սէյիտ Իբրահիմը կը

բնակի Հաւլորու Ս. Կարապետ վանքի մօտերը՝ Հառուկ գիւղի մէջ, թէեւ ցեղերու իւրաքանչիւրն ունի իր առանձին ցեղապետը եւ սէյիտն ու տէտէն»¹³²: Կապ ունի՞, արդեօք, այս անունը հին Մեքքայում իշխող արաբական կուրէշյան ցեղախմբի անուն հետ¹³³, չեմ կարող ասել, սակայն կուրէշյան անունով ցեղախումբը՝ աշիրեթին, առհասարակ շատ էական դերակատարում է ունեցել Դերսիմի ալեւինների անտարում է ունեցել Դերսիմի ալեւիններում, կախութեան համար մղուող կոիւններում, կախութեան համար մղուող կոիւններում, որոշումների ընդունելիս, թերեւս՝ նաեւ որոշումների ընդունելու եւ ինքնութեան ծագումնաբանական եւ ինքնութեան «մենք» մակարդակի ընդհանրութեան հարցերում: Մէկ այլ առիթի թողնելով այս խնդրի քննարկումը՝ անդրադառնամ վերլուծելի քանամեակի կրօնական զարգացումը ինքնին: Ահա կուրէշյան աշիրեթի ընտանիքներից մէկը՝ Կըզըլբանների (Կըզըլբան նիքներից մէկը՝ Կըզըլբանների (Կըզըլբան - ոսկէ արիւն, գույց նաեւ՝ կարմիր արիւն - ոսկէ արիւն, գույց նաեւ՝ կարմիր արիւն - շ. խ.) նախաձեռնութեամբ 2002 թ. կառուցուել է Դերսիմի թերեւս առաջին ալեւիացուել է Դերսիմի թերեւս առաջին ալեւիական կրօնական կառույցը՝ Կուրէշյան բաբայի սրբավայրը: Սրբավայրը գտնուում է ներկայիս Նազիլիէից (նախկին Կըզըլբանի) մօտ կարմրավանք կամ կարմիր եկեղեցի) մօտ 20 կմ հեռավորութեան վրայ՝ Բոստանը¹³⁴ գիւղի մօտ: Սրբավայրը կոչուում է Կուրէշյան բաբայի օջախ:

132 Նոյն տեղում, էջ 156:
133 Կուրէշի, կուրէշիտներ, կուրայշիտներ - հին Մեքքայի իշխող ցեղախումբ, որից սերում էր Մուհամմեդ մարգարէն: Հիմնադիրը համարում է Ֆիլիպ իբն Մալիքը՝ Կուրայշ մականունով: Յետագայում իսլամի տարածումով, դեռեւս Մուհամմեդ մարգարէի կենդանութեան ժամանակ մահմեդականների մի մասի որոշմամբ խալիֆի իշխանութիւնը պետք է համայնքի (ումմա) ընտրութեամբ փոխանցուէր կուրայշիտների ցեղից ամենաարդուած մահմեդականին: Այս որոշումը Մուհամմեդի մահից յետոյ անմիջապէս խալիփութեց՝ սկիզբ դնելով իսլամական աշխարհի պատկաւմանը:
134 Ըստ իմ գրուակիցների՝ Աերկայիս Բոստանը թրքացուած անուան տակ «թաքնուած» է նախկին Հէուստ, ատիլ ուշ՝ Չեւէ անունով գիւղը:

128 Անդրանիկ, էջ 165-166:
129 Անդրանիկ, էջ 152:
130 Նոյն տեղում, էջ 167:
131 Նոյն տեղում, էջ 152:



Լուսանկար 7 - Կոտայքի մարզի օջախի ընդհանուր տեսքը, 2011 թ.:

Մէկ այլ առիթի թողնելով Կուռէյշ բաբայի օջախի ֆունկցիոնալ գերի խնդիրը՝ անդրադառնանք Կուռէյշի կերպարին եւ նրա մասին երկու աւանդազրոյցի: Դրանցից մէկն առաւել մանրամասն գրանցել եմ ներկայիս Մազգիրդից մի փոքր հիւսի-արեւմուտք գտնուող Քոքուլ-զէ//Քոքուլէ (նախկին անունը՝ Կաբուն//Քաբուն) գիւղում ապրող փեր Հուսէյիսի պատմածով: Փեր Հուսէյիսը պատմում էր, որ հայերն ու կուրէյշ աշիրեթի զազա ալեւիններն այս գիւղում համատեղ ապրել են շատ վաղուց: «Գիւղի հայ բնակչութեանը կոտորել են Բալուխ սուլանի քրդերը 1915 թ.,- ընդգծեց փերը,- իսկ մենք յետոյ նրանցից աստիճանաբար գնել ենք հայերի տներն ու հողերը»: Մենք զրուցում էինք նրա տան բակում, եւ մեր զրոյցին մասնակից էին մի քանի համագիւղացիներ, ովքեր փերի պատմութիւնը լսում էին ինձնից ոչ պակաս հետաքրքրութեամբ:

«Քուրան (Կուրան//Քոքուլէ) գիւղի զազա ալեւինները Կուրէյշան աշիրեթից են, որոնց արմատները գալիս են Մէրի Մահմուդ Հայրանիից, ով Կուրաշ անունով որդի ունէր: Կուրաշը հռչակուած էր որպէս սուրբ մարդ: Մի կառավարիչ՝ սուլթան, աւելացնում է փեր Հուսէյիսը,- կար, սա կանչում է Կուրաշին: Վերջինս կասկածում է նրա բարեացակամութեանը եւ փորձում է խուսափել այդ հանդիպումից, սարբեր բաներ է նուէր ուղարկում, մի

անգամ՝ միրգ, մէկ այլ անգամ՝ որսամիս եւ այլն, մինչեւ այս ամէնը ձանձրացնում է կառավարչին, եւ սա պահանջում է, որ Կուրաշն անձամբ ներկայանայ: Վերջինս ստիպուած ներկայանում է, եւ կառավարիչը նրան ասում է, որ ինքն ուզում է փորձել, թէ արդեօք Կուրաշն իսկապէս այնպէս հզօր է եւ հրաշագործ, ինչպէս ասում են: Կուրաշին գցում են վառարանի մէջ, եւ երեք օր շարունակ վառարանը վառուում է: Երեք օրից դուռը բացում են եւ տեսնում, որ նա ոչ միայն չի այրուել, այլեւ բեղերից սառոյց է կախուած: Երկրորդ փորձութեանն են ենթարկում, ծառայի հետ անտառ են ուղարկում, որպէսզի ծառան նրան ծանրագոյն իրավիճակների մէջ գցի եւ նա ողջ չվերադառնայ: Բայց այստեղից նոյնպէս նրանք վերադառնում են ողջ-առողջ, եւ երբ կառավարիչը ծառայի վրայ բարկանում է իրեն չանսարկահամար, վերջինս արդարանում է՝ ասելով, որ ինքն իրականում ուղում էր նրան անտառում ամենածանր փորձութիւնների ենթարկել, սակայն ուր գնացին, ինչ արեց, ամէնուր հրաշալի եղանակ էր, զով, իրենք միայն խաղաղ զրուցում էին, Կուրաշը հետքեր էր պատմում, եւ ինքը համոզուել է, որ անհնար է նրանից այդ կերպ աղատուել: Այդ ժամանակ կառավարիչն ասում է, որ ինքը համոզուեց Կուրաշի հրաշագործ լինելու մէջ եւ պատրաստ է նրան ապրելու տեղ յատկացնել նրա իսկ նախընտրած վայրում, իսկ ծառային կարգադրում է նետել վառարանը: Կուրաշն ասում է, որ աւելի լաւ է՝ ինքը նետ արձակի, եւ որտեղ այն ընկնի, այդ վայրն էլ իրեն յատկացնեն: Նետն ընկնում է ներկայիս Կուրէյշ բաբայի սրբավայրի մօտ՝ Դիւզգուն Բաբա սարի ստորոտը եւ այդ վայրը յատկացնում են Կուրաշին: Այդ ժամանակ սարը դեռեւս Դիւզգուն Բաբա չէր կոչուում: Կուրաշը մեկնում է իրեն յատկացուած վայրում ապրելու: Վառարան

րանում գտնուող ծառան խնդրում է իրեն էլ վերցնել: Երկուսով գնում են:



Լուսանկար 8 - Փիր Հուսէյիսը պատմում է Կուռէյշան աշիրեթի ծագումնաբանութիւնը, 2011 թ.:

Դիւզգուն Բաբայի ստորոտում՝ նետի ընկած վայրում, մի կաղնի ծառ է բուսում «Կաւակ»: Այդ ծառը շատ ուղիղ է, երբեք չի թեքում եւ դառնում է կեանքի խորհրդանիշ: «Կաւակ» կաղնու շուրջը մեծ քարեր են դնում, երբ մարդ է մահանում, դիակը բերում-դնում են այդ քարերի վրայ եւ հետեւում, թէ ինչ կը կատարուի: Անարգար, վատ մարդկանց դիակները սովորաբար երկու գայլեր են տանում, իսկ արդարամիտ, զրական մարդկանցը՝ աղաւնիներ (սա արգար դատաստանի ալեւիական տարբերակներից է - Հ. Խ.):

Կուրաշը Շահայգար¹³⁵ անունով որդի ունէր: Սա դեռ անբեղ պատանի էր (այսինքն՝ անչափահաս էր - Հ. Խ.), այժմը տանում էր արածացնելու: Մի քանի օրից տեսնում են, որ այժմը խիստ պարարտացել են: Հայրը զարմանում է եւ որոտացում է որդուն գաղտնի հետեւել: Զարգուած է որդուն (պատմողն օգտագործում է վիտ հովտում)

¹³⁵ Ուշագրաւ է, որ արաբ կուրայշիտների ցեղի Ե. դարի վերջի առաջնորդներից Հաշիմի թոռներից մէկի անունը Օէյբա էր (այստեղ՝ Աթա ալ Մուրթալի), ում անունն հետ կապուած է Զամզամ ջրհորի վերականգնումը:

«Թեփէ» բառը) տեսնում է, որ իր որդին մօտեցաւ մի ծառի, չիբուխով խփեց դրա բնին, ծառն անմիջապէս կանաչեց, հովիտը կանաչով լցուեց եւ այժմերն սկսեցին ուտել: Այսպիսով հօրը բացայայտում է որդու հրաշագործութիւնը: Մակայն այժմը սկսում են մկկալ, եւ որդին ասում է. «Ինչո՞ւ էք մկկում, հօ՞րս էք տեսել»,- ասում է, շուռ է գալիս եւ ինքն էլ է տեսնում հօրը: Տղան ամաչում է, որ այդպէս անփոյթ է արտայայտուել հօր մասին, թողնում է ամէն ինչ, Զարգովիտից գնում է եւ կորչում: Հայրը մարդիկ է ուղարկում որդուն փնտրելու: Տեսնելով մօտեցող մարդկանց՝ որդին մտնում է մի սարի մէջ, եւ այդ սարը յետագայում վերանուանւում է Դիւզգուն Բաբա:

Կուրաշը մնում է անժառանգ: Նոր կին են բերում նրա համար, եւ նոր ժառանգ է ծնւում: Կուրաշի ցեղը շատանում է, եօթ (տասը)¹³⁶ ուղղութեամբ, եօթ (տասը) ճիւղերը ցրւում են տարբեր կողմեր՝ սրբուհիների մէջ, գնում են Ամասիա, Մաթուլեի մէջ, գնում են Ամասիա, Մաթուլեի մէջ... Իսկ Դիւզգուն Բաբա սարը դառնում է առատութեան, սրբութեան եւ կենսատու օջախ»:

Ահա Կուրաշ բաբայի կողմից գցուած նետի ընկած վայրում, «Կաւակ» ծառի մօտ էլ Կուռէյշան աշիրեթի երկու ալեւի եղբայրները 2002 թ. կառուցել են Կուռէյշ բաբայի անունով շէնքը, որն, ըստ հուրթեան, ալեւինների առաջին կրօնական կառույցներից է:

Կուրէյշ բաբայի օջախում ներսի սենեակներից մէկում, բազմաթիւ մետաքսէ եւ ատլասէ կտորներիով ծածկուած է Կուրաշի անյայտ մասունքը:

Հալուրի Ս. Կարապետ այցելութիւնների նմանութեամբ, Կուրէյշ բաբայի օ-

¹³⁶ Պատմողը՝ փիր Հուսէյիսն, ասում է՝ եօթ կամ տասը:

Ղախ այցելողները մատաղ են անում, մոմ վառում եւ տօնահանդեսներ են ունենում:



Լուսանկար 9 - Կուրաշի անյայտ մասունքը Կուրեշ բաբայի օջախում, 2011 թ.:



Լուսանկար 10 - Մոմավառությունը Կուրեշ բաբայի օջախի մօտ, 2011 թ.:

Սակայն այստեղ արդէն շարունակուում է բանաւոր կրօնական պրակտիկան: Կուրեշ բաբայի պատուին կառուցուած տան ներսի սենեակներից մեծում հաւաքուող դէղէներն ու սէյիդները սազի նուագակցութեամբ յուզուած պատմութիւններ են երգում Ալի եւ Հուսէյին իմամների կեանքի, ինչպէս նաեւ իրենց՝ ալեիների պատմութեան դժուարագոյն դրուագների, «զալումների» (թուրքեր - Հ. Խ.) նուաճումների, նրանց դէմ կռիւների մասին, դանդաղ պարեր պարում, ապա նաեւ՝ անցնում դիւցազներգութիւնների, որոնցում դերեր ունեն Կուրաշը, Շահայ-

դարը, Հալուորու Սուրբ Կարապետը, սէյիդները, հայ քէշիշները եւ այլն:



Լուսանկար 11 - Կուրեշ բաբայի օջախում ալեիները լսում են անցեալի պատմութիւնները, 2011 թ.:



Լուսանկար 12 - Կուրեշ բաբայի օջախի բոլոր հաւաքներում պատմութիւնները պատմուում են Դերսիմում սիրուած գործիքի՝ սազի ուղեկցութեամբ, 2011 թ.:

Կուրեշ բաբայի օջախի ետեւի անտառապատ տարածքի եզրն ամբողջովին ծածկուած է բազմաթիւ խոյածեւ տապանա-

քարերով, ամենայն հաւանականութեամբ՝ ակ-կոյունլուների շրջանի:



Լուսանկար 13 - Խոյածեւ տապանաքար, լուսանկարը՝ 2011 թ.:

Քիչ չեն նաեւ աւելի ուշ շրջանի հորիզոնական տափակ տապանաքարերը, որոնց վրայ արդէն հրացան եւ ատրճանակ է պատկերուած:



Լուսանկար 14 - Տապանաքար, լուսանկարը՝ 2011 թ.:

Ալեիները գտնուում են, որ այս գերեզմանատունն իրենց նախնիներից է մնացել, բայց թուրքական իշխանութիւններն այն համարում են թուրքական/թուրքմէնական:

Մէկ այլ կրօնական շէնք կառուցուել է Փիլուենք գիւղում՝ կրկին գցուած նետի

հետքերով: Այս գիւղը 1938 թ. ծանրագոյն կոտորածների ենթարկուած գիւղերից է¹³⁷:

Նախկինում հայկական այս գիւղում (որի հին անունը, ըստ տեղացիների, Դե-րախաչ է եղել), ըստ գիւղում ներկայումս ապրող մարդկանց պատմածի՝ «մի քէշիշ է ապրելիս եղել գիւղի վերեւի հատուածում գտնուող Զեմեխ վանքում, որ ներկայումս ամբողջովին աւերակ է: Մի անգամ մի սէյիդ իր համար ապրելու տեղ փնտրելիս նետը քաշում է, նետը շատ հեռուից գալիս-ընկնում է ուղիղ վանքի մէջտեղը: Սէյիդը նետի հետեւից գալիս-հասնում է վանք: Վանքում քէշիշին տեսնելով՝ առավանք է միասին օգտագործել վանքը, ջարկում է միասին օգտագործել վանքը, քանի որ իր պցած նետը եկել-ընկել էր վանքի մէջտեղը: Քէշիշը, զարմանալով ալեի վանքի մէջտեղը՝ ասում է, որ վանքը հին ուշադրի վրայ, ասում է, որ վանքը հին ժամանակներից հայերինն է, ինչպէ՞ս կա-ծամանակներից հայերինն է, ինչպէ՞ս էլ ըող է համատեղ օգտագործուել: Սէյիդն էլ առաջարկում է մինչեւ առաւօտ սպասել եւ տեսնել, թէ առաւօտեան իրենցից ով կը մնայ վանքում. «Եթէ առաւօտեան դու լի-նես վանքում, քոնը կը լինի, եթէ ես լինեմ՝ իմը կը լինի»: Սէյիդը վանքից դուրս է գալիս եւ գիշերում է վրանում: Առաւօ-տեան քէշիշն արթնանում է, տնից դուրս է գալիս, տեսնում, որ սարերը, առհասարակ ողջ տեղանքն իրեն ծանօթ է, որ ինքը բո-լորովին ուրիշ տեղ է յայտնուել, այսինքն՝ իր տունը տեղափոխուել է ուրիշ տեղ: Քէ-իւր տունը տեղափոխուել է, որ է գալիս, շիշն, իր վանքը փնտրելով, ետ է գալիս, գտնում է վանքը: Ծանապարհին, սակայն, նրան միանում են ուրիշ քէշիշներ, եւ վանքը գտնելու պահին արդէն քառասուն վանքը գտնելու պահին արդէն քառասուն քէշիշ էին: Սէյիդն ընդունում է հիւրերին եւ նրանց պատուին գառ է մորթում: Քէ-իւր տղան զարմացած հարցնում է. «Այս շիշի տղան զարմացած հարցնում է. «Այս

¹³⁷ Martin van Bruinessen, *The Suppression of the Dersim Rebellion in Turkey (1937-38)*, University of Pennsylvania Press, 1994.

մի գառով քառասուն հոգու ինչպէ՞ս ես կշտացնելու»: Մէյրիզը չի պատասխանում, բայց խնդրում է, որ ուսողները գառան ոսկորները չթափեն, այլ դնեն սեղանի վրայ: Բոլորն ուտում են եւ կշտանում: Քէշիշի տղան ոսկորներից մէկը սեղանին չի դնում, պահում է բերանում: Ուտելը վերջացնելուց յետոյ սէյրիզը խփում է սեղանին եւ ասում. «Դէ փախի»: Գառը կենդանանում է, բայց մի ոտքից կալ է լինում: Մէյրիզն ասում է. «Հասկանում եմ, թէ որտեղ է ոսկորը»: Յետոյ ոսկորը ետ է վերցնում, ինչ որ բաներ է ասում, եւ առողջացած գառը հեռանում է: Մէյրիզի սրբազան ուժը տեսած քէշիշն ընդունում է, որ նա արդար է, եւ համաձայնում է, որ վանքը միասին օգտագործեն: Այդպէս միասին ապրում են, եւ նրանցից չորս խոշոր ճիւղեր են ձեւաւորուում՝ սուլէյմանցիներ, խալիֆանցիներ, փիլուանցիներ, քէշիշխորներ: Բայց հիմա մնացել են միայն երկու ճիւղը՝ խալիֆանցիները եւ փիլուանցիները: Մնացածը կոտորուեցին 1937-1938 թթ.,¹³⁸ իսկ կենդանի մնացած-

138 1938 թ. Դերսիմի ջարդերի հետազոտող Մարտին վան Բրուինսենը հաղորդում է, որ 1938 թ. գարնանը թուրքական կառավարութիւնը յայտարարել էր, թէ զէնքերը յանձնողներին ներում կը շնորհուի: Կարաբէլ, Փիլուանց, Օէյի Մուհամմէդի եւ Կարասի աշիրեթները զէնքերը յանձնում են, բայց թուրքերը Գրանց ամբողջովին ոչնչացնում են: Աւելի ուշ ոչնչացուել է նաեւ Մազկերտի Կուրէշան, Իսուֆան եւ Բախտիյար աշիրեթների մեծ մասը, այդ թույ՛մ՝ կանայք, ծերերը եւ երեխաները, հիմնականում՝ սուրհմերով: Իսկ ամուսն վերջին թունատր գազի ոմբահարումներով ու սուրհմերով ոչնչացուել են Մազկերտի Բամաստրան եւ Նազիմիէի Հորմեկան, Կուրէշան եւ Ալան աշիրեթները: Սպանուածների դիակների վրայ նայե՛ք են լցրել եւ այրել (Martin van Bruinessen, *Genocide in Kurdistan? The Suppression of the Dersim Rebellion in Turkey (1937-38) and the Chemical War Against the Iraqi Kurds (1988)*, in George J. Andreopoulos (ed.), *Conceptual and historical dimensions of genocide*, University of Pennsylvania Press, 1994, էջ 7. http://www.hum.uu.nl/medewerkers/m.vanbruinessen/publications/Bruinessen_Genocide_in_Kurdistan.pdf): Սույն տեղեկութեան մասնատր կարեւորութիւնը տո-

ներին հարկադրեցին ցրուել, տեղափոխուել: Մեծ մասը Փերթեկ (Բերդակ) են գնացել»:

Կուրէշի եւ Փիլուանց գիւղի բնակիչների պատմութիւնների գուգահեռները գրաւոր տեքստերում համալրում են տարբերակներով:

Չարսանճագի պատմութեան շարադրանքի հեղինակ Գ. Ա. Երեւանեանը նախկին չարսանճագցի մէկից տեղեկութիւն է ստանում Մոխնտի գիւղի մի սրբավայրի մասին: «Յրանսաբնակ հայրենակից Պ. Ոսկիան Նալբանդեանը հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնները դրկած է մեղի նոր սրբատեղիի մը մասին. «Կալի մօտով անցնում էր մի մեծ առու, որի եզերքին կողք կողքի շարուած էին հսկայ բարդիներ, որոնք կ'երկարէին մինչեւ Պամասուրի աղբիւրների մեծ ակը: Ակի երկու կողմերը հսկայ երկու բարդիներ՝ իրենց սլացիկ հասակով կանգնած, կարծես պահակներ լինէին Ս. Մարտուպի ակին, որը միապաղաղ դուրս էր ժայթքում մի ժայռի բերնից՝ որպէս օրհնութիւն: Բոլոր քրդերի համար այս աղբիւրը սուրբ էր, ինչպէս նաեւ երկու բարդիներն իրենց երկարամեայ գոյութեամբ: Ամէն անցնող ճամփորդ այս սառնորակ աղբիւրի ջուրը խմելուց յետոյ իր հագուստից մի կտոր կտրում էր եւ կապում բարդիների ճիւղերին: Քրդական մի հին աւանդութիւն ասում էր, որ Պամասուրը սուրբ Մարտուպի (սուրբ Մեսրոպ) աղաւաղուած անունն է: Շատ դարեր առաջ Մարտուպ (Մեսրոպ) ա-


ւել պղծւում այն է, որ Փիլուանց գիւղը, Կուրէշան եւ Իսուֆան աշիրեթները, ինչպէս վերը յիշուած աւանդաբանութիւնը ակնարկում էր, բանատր այլ յիշողութիւններում նույնպէս միշտ համարուել են պեխագած նախկին հայեր, իսկ Բամասուրան/Պամասուրան աշիրեթի հայկական առնչութեան մասին ստորեւ դետես կը խօսուի: Դերսիմում մինչեւ այսօր հաստատուն համոզմունք կայ, որ 1938 թ. կոտորածների ժամանակ հայկական առնչութիւն ունեցող աշիրեթները հետապնդուել են յատուկ դաժանութեամբ:

նունով մի հայ քահանայ է եղել Մոխնտի գիւղում: Այն ժամանակ Մոխնտին մեծ քաղաք է եղել, ինչը հաստատուում են նրա շուրջը գտնուող փլատակները եւ հինգ-վեց եկեղեցիների աւերակները: Մոխնտին գտնուում է Մաստանի հիւսիսարեւմտեան կողմում, եօթ կիլոմետր հեռաւորութեամբ: Երեք կողմերից շրջապատուած է լեռներով ու բլուրներով: Մէջտեղով անցնում է մի աղմկալի գետակ, որը բխում է Շոպակի վերեւ գտնուող բարձր լեռներից: Այդ ձորը Մոխնտիից երկարում է դէպի արեւելք՝ մինչեւ Իոնիս գիւղը, եւ այնտեղ թափուում Բերբի գետի մէջ: Գետակն անցնում է Քարընձոր, Պըլան, Ճանիկ, Խոտան եւ Իոնիս գիւղերի միջով: Այս ձորի երկանքին գտնուում են շատ հայկական յիշատակներ, բայց գլխաւորը Մոխնտիին մէջ է: Գիւղի հիւսիսային թաղի մէջ, քսանից աւելի դարաւոր կաղնիների մէջտեղը կիսապատերով, աւերակ ու փլատակ հին եկեղեցի կայ, որի առջեւով անցնում է Պամասուրի աղբիւրի առուակը: Ըստ տեղացի սէյրիտների պատմածի՝ այդ եկեղեցու վերջին քահանայի անունը Տէր Մարտուպ էր: Այդ քահանան աստուածավախ եւ սուրբ մարդ էր, իբրեւ ժառանգորդ ունէր մէկ հատիկ տղայ զաւակ: Տէր Մարտուպի վախճանուելուց յետոյ նրա որդին ձգում է եկեղեցու մօտ գտնուող իրենց խարխուլ տունը եւ գնում գիւղի հարաւային թաղամասում, կրկին ձորի ձախ կողմում իր համար նոր տուն շինելու: Ս. Մարտուպի զաւակը լինելով պատճառով ամէն ոք պարտականութիւն է համարում գալ եւ նրա ձեռքը համբուրել, որպէս սուրբի ժառանգորդ եւ ապա ուրեմն՝ սուրբ մարդ: Մէյրիզներն ասում են, որ Ս. Մարտուպի տղայի անունը Պամասուր էր եւ նրա անունն աստիճանաբար տարածուում է ողջ Դերսիմում՝ որպէս սուրբ մարդ: Պամասուրը իր ձեռքերով նոր տան հիմքերը փորում է եւ պատերը շարում:

Այդ ժամանակները Դերսիմում մէկ ուրիշ սուրբ կար՝ սուրբ Գուրէշը (Կուրաշ, Կուրէշյը - Հ. Խ.), որ շատ հրաշքներ գործելով՝ բազմաթիւ ցեղեր իրեն հպատակեցրել էր եւ ճանաչուած էր որպէս մեծ կրօնապետ: Ս. Գուրէշը, լսելով Պամասուրի մասին գովասանքները եւ նրա համբաւը, սուրբ մարդու է: Ս. Գուրէշը բարձրանում է լեռը եւ մի արջ իրեն հպատակեցնելով՝ հեծնում վրան եւ իր հետեւորդներով գնում Պամասուրին տեսութեան: Երբ հասգնում Պամասուրին տեսնում է, որ նում է Մոխնտի գիւղը, տեսնում է, որ Պամասուրն զբաղուած է իր տան պատերը շինելով: Պամասուրի շրջապատի [մարդիկ] շինելով: Պամասուրի շրջապատը: Պամասուր յայտնում են սուրբի գալուստը: Պամասուրը տեսնում է արջին հեծած դէպի իրեն երբ տեսնում է արջին հետեւորդներով կող Ս. Գուրէշին, ձեռքի մուրճով խփում է պատին եւ հրամայում, որ [պատը] հետեւի իրեն հիւրին գիւղաւորելու համար: Այս պահին կատարում է հրաշքը. պատը՝ իր քարերով ու հողերով միասին սկսում է քայլել Պամասուրի հետեւից եւ ձորը անցնելով հասնում Ս. Գուրէշին: Ս. Գուրէշը, նկատելով պատի քայլելը եւ քարերի թատեսնելով պատի քայլելը եւ քարերի թաւալումը, անմիջապէս իջնում է ցած, իր հետեւորդներով Պամասուրի աջը համբուրում եւ ասում. «Եթէ ես իմ զօրութեամբ կարողացայ ինձ հնազանդեցնել մի վայրի կենդանի, դու անշունչ եւ անհոգի քարերի վրայ աղբեցիր եւ քեզ հպատակեցիր, ու վրայ աղբեցիր եւ քեզ հպատակեցիր, ուրեմն դու սուրբ ես, Պամասուր, եւ՝ սուրբերեմն դու սուրբ ես, Պամասուր, եւ՝ սուրբերեմն դու սուրբ ես»: Ահա այս քայլող պատի վրայ իր սուրբը»: Ահա այս քայլող պատի վրայ է հիմնուած Պամասուրի օջախը: Գզըլպաշ քուրդերի հարիւրից ութսունը Այս հին առայն եւ նրա անունով երգում: Այս հին աւանդութիւնը ինձ պատմել է Մէյրիզ Պարազուրի շուրհից: Մի օր ինձ ներս կանչեց եւ նոյն տան մէջ: Մի օր ինձ ներս կանչեց եւ ասաց. «Արի սուրբ Պամասուրի աջը եւ քայլող պատը քեզ ցոյց տամ: Մենք, բոլոր պայլող պատը քեզ ցոյց տամ: Մենք եւ պամասուրիներս, նրա սերնդից ենք եւ նրա ժառանգները: Մենք բոլորս էլ Ս.

հանութեան: Բնակչութեան մեծ մասը ցրուել է Թուրքիայի արեւմտեան նահանգներում, իսկ աւելի ուշ՝ տեղափոխուել Գերմանիա: Աւանդական աշիրեթական կապերից զրկուելը, աւանդական բնակավայրերից բռնի հեռացումը եւ վերադարձն անհնար դարձնելու նպատակով այդ բնակավայրերի աւերումը, բնակավայրերի պաշտօնական անուանափոխումը, նոր թուրքական ինքնութեան պետական պարտադրանքը, այլ կերպ ասած՝ անցեալի մշակութի ժառանգորդման անխուսափելի խզումը Դերսիմում մնացածներին «հարկադրել» է Դերսիմի տարածքի հետ կապը գերսրբազ-

նացնել: Արդիւնքում՝ աւանդադրոյցները հարստացրել են աւերուած սրբազան տարածքների մասին նոր միջական «հայ-ալեւիական» մանրամասներով, իսկ Դերսիմի համարեա ողջ ֆիզիկական եւ վիրտուալ տարածքն աւանդադրոյցներում ու նոր կրօնական պրակտիկաներում դարձել է «սրբազան եւ իմաստուն» անցեալի մասը (նոր սրբավայրերով՝ զիարեթներով ու դրանց մասին պատմութիւններով, ծագումնաբանական աւանդադրոյցների դերակատարների յուշարձաններով (Դիւզգուն Բաբա, Կուռէյշ Բաբա), ծխականացուող նոր հանդիսութիւններով):¹⁴⁵



Ներկայիս Թունջելիի (Դերսիմի) քարտեզը:

¹⁴⁵ Տեքստում ներկայացուած աւանդադրոյցները ձայնագրել է Հրանոյշ Սառաւտեանը Թունջելիում, Օվաճիկ, Բոստանլու, Քարուն/Բոլուշէ բնակավայրերում, աւերուած Հալուորի Ս. Կարապետ վանքի տարածքում 2011 թ. յուլիս-օգոստոս ամիսներին: Լուսանկարները՝ Հրանոյշ Սառաւտեանի:

BIBLICAL IMAGERY IN THE "ODE FOR THE TRANSFIGURATION" BY GRIGOR NAREKAC'I

Abraham Terian

Grigor Narekac'i's "Ode for the Transfiguration" («Տաղ Վարդապետի») is conceivably the most poetic of his odes and consequently the most liked, yet it is possibly the least understood of all his works. To many of his readers, the ode has precious little about the Transfiguration – if any – beyond the mention of *Vardavar* in its title, a traditional synonym for the feast, and the immediate alliteration in the opening line: "Gohar vardn var areal..." («Գոհար վարդն վար աւեալ...»)¹ As a pre-Christian feast *Vardavar* was an Armenian summer rite, from Iranian *vardabar*, the "festival of bringing roses."² Neither of the two other synonyms for the feast, *Aylakerput'iwon* (Այլակերպութիւն, lit., "Transfiguration") and *Paycarakerput'iwon* (Պայծասակերպութիւն, lit., "Bright Apparition," drawing attention to the event as a theophany), are mentioned here. The same word, *Vardavar*, appears in the title of Narekac'i's "Litany for the Transfiguration" («Բարոզ Վարդապետի») with the

word *Aylakerput'iwon* used but once in the text (line 67) which, however, is amply clear about the certainty of the feast and its Gospel narrative (Matt 17:1–13 and parallels). The lack of specificity about the feast in the ode calls for exegetical scrutiny, to arrive at the author's intended meaning(s) through his use of abundant symbolism, imagery drawn – as we shall see – entirely from the Scriptures.³

To begin with, the vocabulary of this ode by Narekac'i has some commonality with that of several of his other odes, e.g., 1A, "Ode for the Blessing of Water" («Տաղ յարհնել ջրոյն») lines 29–36; 5A, "Ode for the Raising of Lazarus" («Տաղ ի յարութիւն Ղազարոս») lines 34–41; 6B, "Alternate" («Փոխ») lines 17–24; and 6C, "Ode for the Resurrection" («Տաղ Յարութեան») lines 10–12, 16–18, 28–33, 43–45, 52–57, where he juxtaposes the theophanies of the Nativity, the Transfiguration, and the Resurrection.⁴ These and similar lines in the litanies evolve around the de-

¹ I here follow, with considerable reservations, the text provided by A. K'yoškeryan in the *Matenagirk' Hayoc' (Մատենագիրք Հայոց)* edition, vol. 12 (Antelias: Armenian Catholicosate of Cilicia, 2008), pp. 704–705; cf. eadem, ed., Grigor Narekac'i: *Taler ev Ganjer* (Գրիգոր Նարեկացի. Տաղեր եւ Գաւձեր) (Erevan: Arm. Academy of Sciences, 1981), pp. 117–119.

² See J. R. Russell, "The Etymology of Armenian *Vardavar*," *Annual of Armenian Linguistics* 13 (1992) 63–69; repr. in idem, *Armenian and Iranian Studies*, Harvard Armenian Texts and Studies 9 (Cambridge, MA: Harvard University Press, 2004), pp. 469–475.

³ On the extent to which Narekac'i's predecessors (especially Movses Siwnec'i) reconciled the ceremonial traditions of the feast of *Vardavar* with the Gospel narrative of the Transfiguration, or read them into it in their homiletic interpretation (not so Narekac'i), see the survey by V. Devrikyan, *Paycarakerbut'yunë ev Vardavari tonë (Պայծասակերպութիւնը եւ Վարդապետի տօնը)* (Erevan: Magalat', 2006), pp. 69–73 (this section is excluded in the Eng. edition, cited in n. 10, below).

⁴ In the "Litany for the Transfiguration" (13, lines 38–50), he brings in the theophany of Gen 18:1–15, the Lord's appearance to Abraham at the grove of Mamre.